


Ruppel's Guide U.S.P.

85

2-47



18 NOV 2011

ԳՐԱԳԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

8570

Ձ-47 ս

6

Ա. ՈՐԳԻՍՎԱԿԱՆ ՍԷՐ

Ս.Է.

ԵԻ

Գ.Ո.

Բ. ԱՆԳՆՏԱԿ ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐ

1007  
5706



Հ.Ս.Խ.Ի. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՆ  
\*С.С.Р.А. ЦУОЛНЧЯЯ БИОЛНЧЯ  
7/31. 1922  
У. ՄՅԱՍԻՒՆ 8064

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1908

891-89  
4-89

8178

Ա.

ՈՐԳԻՍԿԱՆ ՍԷՐ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՎ ՀԱՆԳԻՍՈՎ.

ԳՐԵՑ ԺՈՒԼԻՑ ԺԵՆՕՅԻՆՑ

ԹԱՐԳՄԱՆԵՑ Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

ԱՆՁԻՆՔ

Հրամանատար, Վարիչ Զինուորական-վարժարանին.

Հարիւրապետ, Օգնական Վարչին.

Փրիմներ Հազարապետ.

Ալեքսիս Տանապետ.

Ատոլփոս Փրիմներ

Կուստաս

Պէրդին

Փաւստոս

Ուրիշ Աշակերտներ, որ չեն խօսիր.

Աշակերտք Վարժարանին.

Տեսարանը տեղի ունի Զինուորական-վարժարանին մէջ.

ՀԱՆԳԷՍ ԱՌԱՋԻՆ

Դպրոցական դահլիճ մը:

ՏԵՍԻԼ Ա.

Ատոյի, Կուստաս և Պէրդին

Կուստաս. — Բայց քանի՞ օր կ'ընէ որ գրեց տեսնելու չէ եկած:

Ատոյի (տխուրօրէակ). — Ի՞նչ օր:

Պէրդին. — Ո՛ւհ, մե՞ծ դժբախտութիւն. կը կարծէի թէ ինն ամիս ըլլար:

Կուստաս. — Գիտես արդէն թէ զինուորականք ո՞րչափ զբաղումներ կ'ունենան, ուստի հայրդ ալ իբրեւ Հազարապետ տեղական մնայուն բանակին, ո՞ գիտէ ինչպիսի արտաքոյ կարգի զբաղանքի մը պատճառաւ...

Ատոյի. — Ըսելիքդ կը հասկընամ... բայց ես իրեն գրեցի, և գրածիս անգամ պատասխան չտուի. այսպիսի անսովոր վարմունք մը հազար ու մէկ մտածութիւններու նիւթ կու տայ:

Պէրդին. — Կ'ուզե՞ս որ անկեղծաբար խօսիմ քեզի. դուն ինձի ճիշդ տղայ մը կ'երեւաս: Ի՞նչ խակամտութիւն. այդքան վիշտ կրել այն պատճառաւ՝ որ հայրդ ուշացեր է՝ գրեց տեսնելու գալ: Այդ տկարութիւնը անվայել է երիտասարդի մը՝ որ զինուորական ասպարիզին մէջ մտնելու վրայ է:

Ատոյի. — Միթէ զինուորութիւնը պէտք է

խղզէ՞ այն փափուկ զգացումները, զորս բնութիւնն նոյն իսկ վայրենի գազաններուն սըրտերուն մէջ դրոշմեր է դէպ իրենց ծնողները: **Պերդիկ.** — Այդ ըսել չեմ ուզեր. բայց կրնայ մէկը հայրասէր որդի մը ըլլալ՝ առանց այնքան արուեստակեալ ցոյցերու:

**Ատոյի.** — Արուեստակեալ ցոյցեր:

**Պերդիկ.** — Այո՛:

**Կոստաս.** — Ներէ՛ խնդրեմ, Պէրդիկն. դուն միշտ կը խօսիս և կը գործես առանց ետեւառաջ մտածելու. այնպիսի լեզու մը կը բանեցնես՝ որուն բնաւ չեմ կրնար հաւանութիւնս չընորհել: Եթէ սիրոյ համար ալ չըլլայ՝ գէթ քաղաքավարութիւնը կը պահանջէ որ զգուշութիւն բանեցուի ընկերի մը նկատմամբ, որ վշտակրութեան մէջ կը գտնուի, ինչ աղբիւրէ ալ առաջ եկած ըլլայ իւր ցաւն: Իսկ իրեն նախատինքներ ալ աւելցընելը...

**Ատոյի.** — Ո՛չ, ո՛չ. ես չեմ վշտանար իրեն կատակներէն, թէպէտ և խայթող ալ ըլլան. զբօսանքի ժամանակ է, ներելի են: Չեմ կըրնար ես իրեն դէմ անիրաւիլ մտածելով՝ թէ ըսածները մաքի համոզումներուն կը համաձայնին: Եթէ Պէրդիկն իմ վրեժակիս մէջ ըլլար՝ ապահովաբար ինծի պէս պիտի ընէր...

**Պերդիկ (ընդհատելով).** — Հա՛, հա՛, հա՛. քեզի պէս պիտի ընէի:

**Կոստաս.** — Բայց խնտալու ի՞նչ բան կայ այստեղ. կարծեմ շատ յարմար տեղը չէ խնտալու փափաքդ:

**Պերդիկ.** — Բայց չլսեցիր թէ ի՞նչ բաներ ըսաւ Ատոյի... զիս այդքան ծաղրական դեր մը կատարելու կարող համարիլ... Կարծել որ ես ենթակայ ըլլամ... Է՛հ, մէկդի ձգէ այդպիսի գաղափար մը... Քաջ զինուոր մը պէտք է

որ ժամանակին սկսի զոհողութիւններու ինքզինքը վարժեցընել: Ի՞նչ կը կարծէք. միթէ ես ալ իմ հայրս չեմ սիրեր, և գուցէ ուրիշներէն աւելի սիրելու պատճառներ ունենալով: Ողորմելի հարիւրապետ մը և կամ անկէց բան մ'աւելի բարձր մէկը չէ հայրս, այլ պատերազմի մարաջախտ սպարապետ մը, մտածեցէք մէյ մը... և լաւ գիտէք որ սպարապետի մը միջոցներ չեն պակսիր իրեն որդին երջանիկ ընելու: Եւ սակայն եթէ զինքը չըտեսնեմ ալ՝ այնքան տակնուվրայ չեմ ըլլար, մանաւանդ որ ամէն անգամ զիս տեսնելուն կը սկսի իրեն յաւիտենական բարոյական դաստուութիւնները...

**Ատոյի.** — Եւ այդ բանին համար մանաւանդ թէ աւելի երախտագէտ պէտք է ըլլաս:

**Պերդիկ.** — Ինչուան չափ մը... այո՛, կը հասկընամ:

**Կոստաս.** — Բայց հայրական խրատները... կարծեմ թէ միշտ...

**Պերդիկ.** — Այս դպրոցիս մէջ արդէն չափէն ալ աւելի ունինք. վարժապետներ, դաստիարակներ, հսկողներ, տեսուչներ, ամէնքն ալ զաշնակցեր և և միևնոյն եղանակը կ'երգեն գլխընտո՞՞ հոգիսիս մաշեցընելու չափ... մըտքերնիս չափազանց յոգնեցնելով... Այս նշըութեանց վրան աւելցուցէք նաեւ վարժարանիս պահանորդութիւնն ընելու ձանձրոյթը... Եւ ներկայ անիծած պատերազմներն ալ բնաւ վերջ չեն ունենար, որով մենք ալ դատապարտուած ենք...

**Կոստաս.** — Լո՛ւէ, Լո՛ւէ, թէ որ յանկարծ մէկը լսելու ըլլայ զուրցածներդ, ծանր պատասխանատուութեան տակ կրնայ գրեզ ձգել...

**Պերդիկ.** — Փա՛ռք Ատոյի, այլ ես այդպիսի վտանգի մը չեմ կրնար ենթարկուիլ:

Ատոյի. — Ի՞նչ պատճառաւ:

Պէրդիկն. — Ո՛րչափ ատեն կարծէք որ պիտի մնամ ես հոս այս շատատուութեանս մէջ ոսկորներս ցամքեցնելու... Այս վայրկենիս արդէն որոշումն տուած պիտի ըլլայ Նորին Վեհափառութիւնն իմ վիճակիս: Պիտի տեսնէք երկու օր չանցած՝ ես կամ Ռազմակերտ-գորաբաժնին սպայ կ'անուանուիմ և կամ Արքունական-գորախմբին: Ժամանակս արդէն լրացեր է, դպրոցական շրջանս կատարեր եմ և քննութիւններս տուեր...

Կոստաս. — Թէ որ բոլոր յոյսդ տուած քննութեանցդ վրայ հաստատեր ես, սիրելիդ իմ, շատ ուրախ ըլլալու նիւթ մը չունիս:

Պէրդիկն. — Ի՞նչ ըսել կ'ուզես, գէշ քննութիւններ տուի:

Կոստաս. — Լաւ ալ ըսել չէ կարելի:

Պէրդիկն. — Առանց քեզի շողոքորթութիւն ընելու՝ ըսեմ որ դուն ալ...

Կոստաս. — Տուած քննութիւններս ինծի այնքան պատուաբեր չեղան ըսել կ'ուզես. այո՛, ես ալ գիտեմ. բայց պէտք է խոստովանինք թէ մէջերնէս ամենէն աւելի քաջ հանդիսացողն և գովեստներ ընդունողն չի պարծիր, այլ համեստաբար կը լռէ:

Պէրդիկն. — Ո՞վ:

Կոստաս. — Ահաւասիկ հոս է. մեր բարի Ատոյի:

Ատոյի. — Ո՛հ, ի՞նչ կ'ըսես. զիս ամբջցընել կ'ուզես:

Կոստաս. — Չէ՛, չէ՛. ճշմարտութիւն է ըսածս:

Պէրդիկն. — Ըսելիք չունիմ. մտքի աւելի պատրաստականութիւն և աւելի համարձակ կերպ ունեցած պիտի ըլլայ տուած պատասխաններուն մէջ. բայց կարծեմ ես ալ իրեն չափ և

իրմէն ոչինչ պակաս արժէք ունիմ, մանաւանդ բնական և թուական գիտութեանց մէջ... Կոստաս (խնայալով). — Ափսոս որ այդքան գիտնական արժէք ունենալով հանդերձ՝ երես չըճերմըկցուցիր:

Պէրդիկն. — Երբեմն յիշողութիւնս ինծի չի ծառայեր. քիչ մը մտքիս բռնուածութիւնը զիս չփոթութեան մէջ ձգեց: Բայց ասիկայ նշանակութիւն մը չունի, որովհետեւ քննութիւն ըսուածը վերջապէս ուրիշ բան չէ՛՝ բայց եթէ ձեւակերպութիւն մը, և ես անոր հետեւանքէն վախ չունիմ: Իմ ազնուական սերունդէ ըլլալս կ'պահանջընէ ինծի...

Ատոյի. — Լուռ կեցիր. ահաւասիկ Հրամանատարը կու գայ:

## ՏԵՍԻԼ Բ.

Հրամանատարը, Հարիւրապետը և

Առաջիկները

Հրամանատար. — Յարգանքներս, պարոններ: Ատոյի, Կոստաս, Պէրդիկն (կը ծռիկ Հրամանատարիկն):

Հրամանատար. — Հարիւրապետ, հաճեցէք հոս հաւաքելու նաեւ միւս աշակերտները, որոնք քննութիւննին աւարտեր են. ըսել կ'ուզեմ այս դասին ուսանողները:

Հարիւրապետ. — Շատ լաւ. (կը մեկնի):

## ՏԵՍԻԼ Գ.

Առաջիններն, բայ ի Հարիշրապետեն

Հրաւանատար (յետ դիտելու գԱտրփոս). — Ինչ ունիս, Ատրփոս. Ինձի ուրախ չես երեւիր:

Ատրփի (աչքերը վար կ'աւելե և կը լռէ):

Հրաւանատար. — Պատասխան չէ՞ս տար:

Պերդիկն. — Պարոն Հրամանատար, ես ըսեմ իրեն տխրութեան պատճառը, որովհետեւ . . . (խնտարով):

Հրաւանատար (ժակնորշեալ մը խօսքը կը լռութիւր). — Ես հարցմունքս քեզի չուզեցի, պարոն Պէրդիկն:

Պերդիկն. — Ներեցէք, կարծեցի թէ . . . (ցած ձայնով առ կոտաս) Ո՛ւհ, ինչ թթուած կերպարանք ունի:

Կոտաս (նշան կ'ընէ Պերդիկի լռելու):

Հրաւանատար. — Ուրեմն ինչո՞ւ տխուր ես. պատճառ մը պիտի չօրհնենաս . . . ըստ ինքեան (շեշտելով):

Ատրփի. — Բնաւորութիւնս է . . . այսպէս . . .

Հրաւանատար. — Գիտեմ. բայց զբօսանաց առ տեն պէտք է միտք սթափեցընես անմեղ զուարթութեամբ . . .

Ատրփի. — Իրաւունք ունիք . . . (տխրագիւն):

Հրաւանատար. — Ուրեմն ուրիշ ծանր պատճառ մը . . . Պատճառը դուն գիտե՞ս, պարոն կոտաս:

Կոտաս (յետ նայելու Հրաւանատարին). — Կրնամ պատասխանել:

Հրաւանատար. — Երբոր հարցմունք կ'ընեմ, կարծեմ պատշաճութիւնը կը պահանջէ . . .

Կոտաս (փոշարով). — Լաւ ուրեմն. գիտցէք որ խեղճ Ատրփը . . .

## ՏԵՍԻԼ Գ.

Հարիշրապետն ուրիշ աշակերտներու նկատ և  
Առաջիններն

Հարիշրապետ. — Ահաւասիկ, տէր Հրամանատար:

Հրաւանատար. — Բարեւ ձեզ, սիրելի բարեկամներ: — (Աշակերտք զինուորական ոճով կ'ողջունեն Հրաւանատարը):

Կոտաս (ցած առ Պերդիկն). — Գէթ ինչ որ հարկն էր՝ ամբողջ ըսի:

Պերդիկն. — Լռէ՛:

Հրաւանատար. — Հոս գալուս նպատակն է որ հաղորդեմ կարեւոր բան մը՝ որ ձեզի կը վերաբերի . . .

Կոտաս. — Արդեօք Նորին վեհափառութեան որոշմունքը լսեր էք . . .

Հրաւանատար (ժպտելով). — Հիմաջ ես քեզի հարցմունք չըրի:

Կոտաս. — Իմ ըրածս հարցմունք մ'է . . . ինչդրեմ ներեցէք, բան մը որ մեզի կը վերաբերի . . . (կանգ կ'աւելէ իրրեւ խօսելու զրդւազած):

Հրաւանատար. — Գիտցէք ուրեմն որ քիչ առաջ Նորին վսեմութիւնն՝ Պատերազմի Նախարարը իմացուց ինձի՝ որ Թագաւորը տեղեկանալով թէ վերջին քննութեանց մէջ ան-

մրցելի կերպով քաջ հանդիսացած է մի միայն Ատուլփոս Փրիմներ, զինքը Արթուրեական Զօրագնդին սպայ անուաներ է:

Կոտուս. — Կեցցէ՛. արժանի էր. գրաւ կը դնէի՝ որ այդպէս պիտի ըլլար. և բոլոր սըրտով կ'ուրախակցիմ (առ Ատուրփոս):

Ատուրփ. — Ծնորհակալ եմ, ազնիւ բարեկամ: Հրաւանատար (իկեքիթեկե). — Ի՞նչ ազնիւ հոգի ունի այս երիտասարդը:

Պերդիկե (միշտ աշակերտաց ձեռ տխրագին կը կենայ):

Կոտուս. — Իսկ մեզի համար, եթէ անվայել չէ հարցմունքս, ի՞նչ որոշումս եղած է... Ի՞նչ աստիճան ընդուներ ենք:

Հրաւանատար. — Բանակի սպաներ:

Կոտուս. — Դեռ աւելի չարագոյնը կրնար ըլլալ. ի՞նչ որ է՝ դարձեալ բան մ'է:

Հրաւանատար (իկեքիթեկե). — Այդ երիտասարդին համակամութիւնը ինծի հաճելի կու գայ:

Պերդիկե (դաւնոտրեալը սրտի առ Հրաւանատարն). — Կը յուսամ թէ ես այս վերջիններու դասակարգին համար եղած այսպիսի որոշման մը ենթարկուած չեմ:

Հրաւանատար (ժակրոտրեալը). — Ոչ:

Պերդիկե (միտրարուած). — Ուրիշ կերպ կարելի չէր. Ռազմակերտ-Զօրաբաժնին մէջ նշանաւոր տեղ մը ինծի պէտք չէր պակսիլ:

Հրաւանատար. — Կը ցաւիմ ըսելու որ յուսախաբ պիտի մնաս:

Պերդիկե. — Կը հասկընամ, կը հասկընամ. անշուշտ ընտրուած պիտի ըլլամ իբրեւ պատերազմական թիկնապահ իմ մարաջախտ հօրս...

Հրաւանատար. — Պարոն Պէրդիկե, ես կ'ուզէի ինայել այս վայրկեանիս մահացնելու զքեզ, բայց որովհետեւ դուն կը բռնադատես զիս

քեզի պատասխանելու, ստիպեալ եմ ըսելու որ դասընկերներուդ մէջ միայն դուն գորկ պիտի մնաս որ և իցէ պատուոյ աստիճանի մը վարձատրութենէ:

Պերդիկե. — Ե՛ս միայն... Կարելի՞ բան է... Ե՛ս միայն (գարնակքով):

Հրաւանատար. — Գէթ ինծի Նախարարն այդպէս ըսաւ:

Պերդիկե. — Ինծի, ինծի՞ դէմ այդպիսի զրկանք մը կը գործադրուի (տաքոտրեալը):

Հրաւանատար (ժակրոտրեալը). — Զրկանք մը չեմ գիտեր թէ այս ըրած դատողութիւնդ իրճատանքիդ համաձայն է:

Պերդիկե. — Բայց ես այդպիսի բանի մը համբերող մէկը չեմ... (իկեքիթեկե դուրս ելած) Ես չեմ կարող հանդարտութեամբ թողուլ որ...

Հրաւանատար (խտոտրեալը). — Է՛, չափ դիր լեզուիդ. թագաւորին արդարութեան առջեւ և իրմէն ինծի տրուած իշխանութեան դիմաց՝ առանց պատիժ կրելու ձայն չի կրնար բարձրացուիլ... (Հակարտուելով) Համակամէ մանաւանդ դուն քու վիճակիդ, և աւելի փութաշան ըլլալով և աւելի գովելի ընթացք մը բռնելով՝ նայէ որ թագաւորական ներքալ մտութեան և հասարակաց համարման զքեզ արժանի ընես, ապա թէ ոչ՝ վարժարանիս կանոնները քեզի ծանօթ են...

Պերդիկե. — Ա՛խ, ինծի դէմ դաւաճանութիւն մ'եղած է... (իկեքիթեկե սպաւնալեզ) Բայց...

Հարիշարպետ (ցած ձայնով առ Պերդիկե). — Ի սէր Ատուռոյ, ինքզինքդ սանձէ. դուն միշտ առանց մտածելու կը գործես... (Հրաւանատարը խտիւր կը կայի Հարիշարպետին, և նա խօսիլը կ'ընկճուտ):

Հրաւանատար (չակնարկ իշր գայրոյրը ցայել),



կը բռնէ Ատոյի ձեռքէն և քաղցրորեալը կ'ըսէ). — Սիրելիք իմ Ատույի, սրտանց ու լախակից եմ քեզի, և յոյս ունիմ որ քեզի տուած աւետիքս փարատէ քու տխրութիւնդ՝ ինչ պատճառէ ալ առաջ եկած ըլլայ:

Ատոյի. — Տէր իմ, այնքան շփոթած եմ՝ որ չեմ գիտեր ինչպէս երախտագիտութիւնս յայտնեմ Նորին Վեհափառութեան գթութեան, որ . . .

Հրաւանատար. — Ո՛հ, ո՛չ. այս գործը արդարութեան գործ մ'է, որուն արժանաւոր եղար քու ձիրքերովդ և քու բարի վարքովդ, (կը նայի Պերդիկէի երեսը) և քու ուսումնասէր անխոնջ աշխատութեանդ համար: Եթէ դասակիցներդ քեզի հետեւած ըլլային՝ մի և նոյն բախտը իրենց ալ աւետելու մխիթարութիւնն ունեցած պիտի ըլլայի, բայց . . .

Հարիշրապետ. — Կը յուսամ որ իրենց պատուաբեր վարքութեամբով Զօրագունդներուն մէջ՝ պիտի գրաւեն արքունի բարերարութեան վստահութիւնը և շուտով մեծագոյն աստիճաններու հասնին:

Կոստաս. — Կը խոստանամ ես զայն ձեզի՝ ա մենուն կողմանէ: (առեկքն ալ հաւանորեան նշաններ կ'ընեն):

Պերդիկէ (խեղճիտեմ). — Ինչ ամօթ . . . ես միայն . . . այն ալ ես . . . Կատարութիւնս կու գայ:

Հրաւանատար. — Լաւ միտքս ձգեցիր, Հարիւրապետ: Թագաւորը գիտնալով թէ մտքի ցըրուածութիւնները որչափ պատճառ կ'ըլլան ուսմունքի եռանդը պաղեցնելու, մի և նոյն ժողովին մէջ հրամայած է որ բնաւ աշակերտի մը հրաման չտրուի վարժարանէս հեռանալու՝ առանց իւր արքունի կամքին տնօրէնութեան, և առանց իմ կողմանէս առաջուց

ծանուցանելու Նորին Վեհափառութեան այն պատճառները՝ որ կրնան հարկադրել հրաման չտրուելու: Ուստի առաջուց կ'ըսեմ քեզի որ այսուհետեւ այդ մասին խնդիրներ չներկայացնես ինձ՝ առանց նշանակելու նաեւ ամենաճանաչ պատճառները՝ որ կրնան արդարացընել այդպիսի խնդիր մը:

Հարիշրապետ. — Ճշդիւ պիտի կատարուին ձեր հրամանները, տէր Հրամանատար. շուտով նաեւ միւս աշակերտաց և հսկողաց ալ պիտի իմացընեմ Նորին Վեհափառութեան այս տրամադրութիւնը:

Պերդիկէ (խեղճիտեմ). — Կ'ուզեն զիս յուսահատութեան մղել:

Հրաւանատար. — Պարոններ, յարգանքներս. մնաս բարով, բարի Ատուփոս. կարելի է այսօր ձեռքդ հասնի քեզի տրուելիք վճռագիրը: Հարիւրապետ, հետս եկուր, խօսելիք ունիմ:

Հարիշրապետ. — Պատրաստ եմ: — (Հրաւանատարի կ'ընկերակցի միևնույն դռնը բոլոր աշակերտները, բաց ի Պերդիկէ, որ բռնակերպով հակառակ դռնէն դուրս կ'ելլէ):

Հրաւանատար (Աշակերտներուն). — Դնորհակալ եմ. (կը մեկնի Հարիշրապետին և միւս աշակերտաց հետ. քստերաքեմի միայն կը մնան միայն Ատոյի և Կոստաս):

## ՏԵՍԻԼ Ե.

Ատոյի և Կոստաս:

Ատոյի. — Խեղճ Պէրդիկէ. որչափ կը ցաւիմ: Կոստաս. — Ո՛հ, ես առաջուց գուշակեր էի. և

ճշմարիտը զուրցելու համար՝ կրնամ ըսել որ գրեթէ հաճոյք զգացի իրեն ամբարտաւանութեան խոնարհելուն վրայ:

Ատոյի. — Կերէ, այդ զգացումը քեզի վայել չէ. պէտք է ուրիշներուն փոքրիկ պակասութեանց վրայ կարեկցիլ...

Կոստաս. — Փոքրիկ պակասութիւններ. բայց չէ՞ն տեսներ թէ ինչպէս սիրտս կը ճաթեցընէ Պէրդին: Մե՞ծ բան, միշտ բերնին մէջ է իր հօրը մարաշախտութիւնը, միշտ իրեն ազնուական սերունդէ ըլլալը, կարծես թէ մենք դժուամներէ՝ բուսած ըլլայինք և կամ հնակարկառի մը զաւակներ:

Ատոյի. — Սակայն ուրիշ մը հասած փաստէն հաճոյք զգալը...

Կոստաս. — Պարագաներ կան՝ որ առողջութեան կ'օգնէ: Ինչ ըսեմ. ես այսպէս շինուած եմ. չեմ կրնար ուռուցիկ գնտակներու հանդուրժել. բայց կը սիրեմ խելացի, համեստ երիտասարդները և անկեղծաբար կ'ուրախանամ անոնց երջանկութեան վրայ, ինչպէս ուրախացայ քեզի հանդիպած բարիքին, և չես կըրնար երեւակայել թէ ինչպիսի հաճութիւն կը զգամ զքեզ գո՞հ տեսնելով:

Ատոյի. — Ո՛հ, սրբան աւելի գոհ պիտի ըլլայի՛ եթէ այս ուրախութիւնս կարենայի հօրս հետ բաժնել: Ախ, եթէ հրաման տրուէր ինձ այս վայրկենիս իւր բազկաց մէջ թուչելու, կ'ուզէի հազար անգամ օրհնել իրեն իմ վրաս ունեցած հոգն ու խնամքը, իրեն իմաստուն խրատները, յարատեւ ջանքն՝ սիրտս շտկելու, ազդելու ինձ պատուոյ և կրօնքի և եղբայրս սիրութեան զգացումները: Կ'ուզէի նոյն իսկ շնորհակալ ըլլալ իրեն այն խիստ յանդիմանութեանց համար, որով ազնիւ գտնուեցաւ

միշտ իմ սրտիս մէջ ուսմանց եռանդն և պարտուց կատարումն արժարձելու: Ո՛հ, սրբան իմաստուն խնամատար է հայրենի խտուածիւնն:

Կոստաս. — Հիմայ ես ալ կ'անդրադառնամ, թէ և քիչ մը ուշ. առջ այդպէս չէի մտածեր: Զոր օրինակ, երբ կը տեսնէի Հազարպետ հայրդ՝ որ քեզի դէմ խտուածիւն կը բանեցընէր, միշտ լուրջ և ծանր ձայնով մը կը խօսէր, մտքէս կը դատէի թէ անգութ մէկն ըլլալու էր...

Ատոյի (տնաւորեալն ձեռ մը կ'ընէ):

Կոստաս. — Կամ գէթ թթու բնաւորութիւն ունեցող մը. և ես շնորհակալ կ'ըլլայի հախախնամութեան՝ որ թողած էր երկրիս վրայ ինձի համար մայր մը՝ զոր ամենէն աւելի զգայուն և գորովալի կը համարէի, որովհետեւ զիս ներողամտութեամբ և զգուանքներով կը փայփայէր, և երբեք դատարկ ձեռքով չէր գար զիս տեսնելու... Կը հասկընամ, ես այն յատեն գոհ կը մնայի իմ վրաս. ուսմանց այնքան փոյթ չէի ընէր, ընդհակառակն աւելի զուրճանալու ետեւէ կ'ըլլայի, և խեղճ ու սուցիչներուս շունչը կը քաղէի... և ահաւս սիկ հետեւանքը. դուն Արքունի-գորագնդին սպայ մը, իսկ ես Նոկատի հասարակ սպայիկ մը: Եւ ո՞ գիտէ, Տէր Աստուած, և ո՞վ կրնայ ըսել թէ որ մէկ անկին մը պիտի նետեն զիս ապրելու...

Ատոյի. — Կ'ախորժիմ յուսալ որ...

ՏԵՍԻՒ Զ.

Այեքսիս Տասնապետը և Առաջիններն

Այեքսիս (առանց բարեւերու ներս կը մտնէ, և կը սկսի աշիկ սեկեակիր ինքնիրեն խօսելով).

— Անիծած ըլլան մենամարտութիւնք և ուրոնք որ հնարեցին այդ ամօթալի գործը... Չեմ ուզեր այլ եւս այդպիսի գայթակղական իրողութիւններ... չեմ ուզեր այլ եւս (սրբադատ):

Կոստաս. — Ի՞նչ ունիս, Այեքսիս. ինքիրենդ կը խօսիս:

Այեքսիս (ինքնիրեն). — Ամօթ է, ամօթ. շաբաթ մը չ'անցնիր որ մենամարտութեան հրաւերներ տեղի չունենան...

Ատոյի. — Ի՞նչ, արդեօք մենամարտութիւն մը հանդիպեր է:

Այեքսիս. — Եւ երբ չեն հանդիպիր... (նայելով իրեն) Ժամանակաւ զինուորականները կը պարծէին կամ Տէրութեան և կամ Թագաւորին թշնամիները սպաննելով, և կամ անոնց մէջ սպանուելով. իսկ հիմայ բոլոր իրենց քաջութիւնը կը կայանայ փոխադարձ եղբայրակցութեամբ մէկմէկու աղիքները դուրս թափելու մէջ:

Ատոյի. — Ո՞վ եղած է մենամարտողն:

Այեքսիս. — Չեմ գիտեր, և ոչ ալ փոյթ ունեցայ գիտնալու... Կատարութիւն մ'եկաւ վրաս երբոր լսեցի: Գիտէք ինչ կէտի վրայ պէտք է կեցած համարիլ պատուոյ զգացումը. սրի մը ծայրին վրայ. ճիշդ հոն. և ո՞վ որ այդ ծայրը

1002  
5706

ուրիշի մը մարմնոյն մէջ լաւագոյն կերպով գիտէ ներս խոթել՝ իրաւունքն անոր է: Եւ մինչդեռ ըրածը զրեթէ աւագակի մը գործ է, կան այնպիսի մոլեռանդներ որ զինքը կը գովեն, կը փառաբանեն . . . է՛ն, թէ որ ինծի մնար, կ'ուզէի նաւարաններու բռնի աշխատութեանց դատապարտել զինամարզի բոլոր վարժապետները, չխնայելով նոյն իսկ մեր այս Գարոցին զինամարզին, որ այնքան սիրելի բարեկամս է (ըստիւրեքս):

Կոստաս. — Այեքսիս, դուն ամէն բան ծայրայեղութեան կը տանիս:

Այեքսիս. — Ծայրայեղութիւնը որն է... Տէր Աստուած, այնքան աշխատանք կը քաշենք չորս օրուան մը կեանքերնիս կարելի եղածին չափ լաւ անցընելու համար, զինուորութեան մէջ աստիճանի մը հասնելու համար . . . Եւ Աստուած գիտէ թէ սրբան չարչարուեր եմ եւ ողորմելի տասնապետ մը ըլլալու համար... Եւ յետոյ տեսնել՝ մնայուն բանակիս նոյն իսկ նոյն իսկ Հազարապետ մը...

Ատոյի (ընդհատելով յազմակը). — Մնայուն բանակիս Հազարապետ մ'ըսիր... Մե՞ծդ Աստուած... Ի՞նչ Հազարապետի վրայ է խօսքը...

Այեքսիս. — Այն Հազարապետին վրայ՝ որ եւ թարկած է ինքզինքը փառաւորապէս սրի մը վրայ անցուելու, ինչպէս ճնճողիկ մը շիշին վրայ...

Ատոյի. — Վայ գլխուս... (Գողորդալով կ'իյնայ արուշի մը վրայ. Կոստաս օգնուրեան կը վազէ):

Այեքսիս. — Ի՞նչ եղաւ (զարմուկով):

Կոստաս. — Ապուշ, չմտածեցիր որ Հազարապետն իր հայրն է:

Այեքսիս. — Յիմար եմ, չմտածեցի:



Ատորի. — Բոլոր շիղերս կը դողան (գրկելով կոստասը):

Ալեքսիս. — Չէ՛, չէ՛, մի՛ դողար, պարոն Ատուփոս. ըսածս ճիշդ չէ . . . Բնաւ մէկը սպառնուած չէ... Ես աւելցուցի այդ պարագան՝ խօսքիս ազդեցութիւն տալու համար... Կարելի՛ բան կը կարծես որ Հազարապետ մը... այս ալ ըսեմ որ լաւ չհասկըցայ թէ արդեօք հազարապետ մ'էր, թէ հարիւրապետ, յիսնապետ, քասնապետ... թմբկահար... (Ինքնիրեն) Ես ալ չեմ գիտեր բերնէս ինչ դուրս կու տամ:

Ատորի. — Զուր տեղ կը ջանաս զիս համոզելու. սիրտս որ այսքան սաստիկ կուրծքիս տակ կը բաբախէ...

Ալեքսիս. — Սիրտդ շատ գէշ կ'ընէ. չէ՛, պէտք չէ որ բաբախէ. կը վստահացնեմ զքեզ որ այդպիսի հարկ մը չկայ:

Ատորի (սաստիկ յուզուած). — Ահաւասիկ, ահաւասիկ իմ տխրութեանս պատճառը... Զարագուշակ նախազգացում մը...

Կոստաս. — Հանդարտ բռնէ սիրտդ, սիրելի Ատուփոս. քու որդիական զգայուն սիրտդ փափկութիւնը ճարտար է զքեզ չարչարելու. դուն լաւ գիտես թէ հայրդ որչափ խոհեմ, որչափ առաքինի մէկն է:

Ալեքսիս. — Ո՛րքան զգուշահայեաց, խելացի...

Ատորի. — Բայց գիտեմ նաեւ թէ որչափ բարկանալու դիւրագրգիռ է... Ո՛չ, ո՛չ. ես չեմ կրնար այս դառն անստուգութեան մէջ մնալ. (ոտք կ'ընէ և դիպ ի դռներ կը դիմէ). Կ'ուզեմ իրեն վազել երթալ...

Կոստաս (բռնելով զինքը). — Ո՛չ, ի սէր Աստուծոյ, ո՛չ. կ'ուզեմ ուրեմն առանց հրաման ընդունելու՝ վարժարանէն դուրս ելլել. դուն

ինքդ չլսեցիր թէ ինչ հրամայեր է Թագաւորական Վեհափառութիւնն... Այս օրինականացութիւնդ քեզի շատ ծանրի կրնայ նստիլ...

Ատորի. — Արկածներու ծանրագոյնը և սարսափելին հայրասէր որդւոյ մը համար՝ պիտի ըլլայ կորուստը... (լալով)... Աստուած իմ, Աստուած ողորմութեանց. իմ կեանքս, այո՛, նոյն իսկ կեանքս մանաւանդ թող զոհուի. (կը դիմէ դեպ ի դռներ):

Ալեքսիս. — Բայց կ'ըսեմ քեզի... (կը բռնէ): Ատորի. — Թող զիս, կը պաղատիմ... (Ներսէսը բռնելի ձայնը կը շտռի):

Կոստաս. — Կը լսեմ. պահանորդի փոփոխութեան վայրկեանն է. եթէ դիպուածով քեզի ինկնայ կարգը...

Ատորի. — Բայց ինչպէս կրնամ այսքան յուզմունքի մէջ... Առանց գիտնալու թէ հայրս... Ո՛չ, բարեկամքդ իմ, թողուցէք որ երթամ:

Ալեքսիս. — Ես ինքս կ'երթամ. հիմայ շուտով ձեր տունը կը վազեմ, և յուսամ մխիթարական լուրեր կը բերեմ:

Ատորի. — Ախ...

Ալեքսիս. — Մի՛ տարակուսիր, Ատուփոս. կարելի է որ նոյն իսկ մենամարտն անգամ տեղի ունեցած չըլլայ... Ինծի ըսողը այնպիսի մէկն է՝ որ քովէն շատ մը շինծու բաներ կը ստեղծէ... (Գարձևայ բռնելի ձայնը կը շտռի):

Կոստաս. — Երթանք. (կը բռնադատէ Ատորի իրեն հետեւելու):

Ատորի. — Զեմ գիտեր ինչ ընելու . . . Բայց կը պաղատիմ (աւ Ալեքսիս)... շուտ ըրէ:

Ալեքսիս. — Ամենաշուտ. քառորդէ մը հոս կ'ըլլամ, քանի որ խնդիրը վազելու վրայ է... (Ինքիրեն) Եւ սակայն պէտք է այս լեզուս կըտրեմ. (կը մնկնի):

## Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Գաւիթ զինուորական, երեք դուռերով:

### ՏԵՍԻԼ Ա.

Փառաստու միայնակ կը շրջագայի հրացանէր  
ձեռքը Զինուորական-Վարժարանին գլխաւոր  
դրան առջեւ:

Փառաստու. — Այս առաւօտ սրչափ երկար կու  
գայ ինձ պահանորդութեան ժամանակը...  
Ապահովապէս ժամն անցած է... և ես դէս  
հոս կը մնամ... Գրաւ կը գնեմ որ մոռցած  
պիտի ըլլան... Հրամանատարին գալուստը  
պատճառ եղած պիտի ըլլայ այդ մոռացու  
թեան: Ամէնքը անոր չորս դին բոլորած պիտի  
ըլլան՝ յարգանքնին մատուցանելու, և ես հոս  
այս շնորհալի զարդն ալ ձեռքիս մէջ (ցոյց  
տալով հրացանը) վեր վար կը քալեմ՝ առանց  
նախաճաշիկս ըրած ըլլալու: Եւ չարագոյն  
այս է՝ որ սաստիկ անօթութիւն մ'ալ կ'ըզ  
գամ, անօթութիւն մը՝ որ կարծես աչքերով  
ալ կը տեսնեմ... Փորս դատարկ տիկ մը  
դարձեր է... Սըստ, կարծես թէ վերջապէս  
դէպ ի հոս կու գան... Ո՛հ, ո՛չ, Պէրդինն է  
... Արդեօք ինչ ելք ունեցեր է. իրեն կ'իյնայ  
ինծի հաղորդելու... Ծառայի մը հետ կը խօս  
տի տաքութեամբ... լսեմ թէ դարձեալ ինչ  
ապուր կ'եփէ, բայց այնպէս կեղծեմ՝ իբր թէ  
մտիկ չեմ ընէր... (կը քարկ). միամիտ մէկը  
պիտի ձեւանամ:

### ՏԵՍԻԼ Բ.

Պերդին, ծառայի մը սետ, որուն ձեռքը նախակ  
մը կայ և Առաջինէն

Պերդին. — Կը յանձնեմ որ շուտ ընես, հաս  
կըցար. յատուկ իմ մարաջախտ հօրս ձեռքը  
յանձնես, կ'ըմբռնես ըսածս. (ծառան հաշա  
նուրիւն կը ցոլցնէ):

Փառաստու (ինքնիշխան). — Անշուտ հօրմէն դրամ  
կ'ուզէ:

Պերդին. — Ա՛ն ասիկայ (բարի-ձեռք կու տայ  
ծառային). գնա, վազէ, և շուտ դարձիր, պա  
տասխանը հետդ բեր. բայց շուտ ըրէ. (ծա  
ռան կը մեկնի)... Ո՛հ, տեսնե՛ք... աչքերս  
արիւն դարձած գրեցի. և այդ նամակը ա  
ռանց հետեւանքի չի մնար. ընտանեացս պա  
տիւր կայ մէջտեղ:

Փառաստու. — Ի՞նչ հանդիպեր է արդեօք. (ինքն  
իշխան քալելով):

Պերդին (սրբորոյ). — Ինծի այդպիսի անպա  
տուութիւն մը... ինծի... կարծես դպրոցին  
ամենէն աւելի վատագոյն աշակերտն ըլլայի...

Փառաստու (ինքնիշխան). — Իրեն սովորական յի  
մարութիւններէն մէկը ըրած պիտի ըլլայ:

Պերդին. — Ո՛հ, ինչ ժամանակի հասեր ենք.  
չեմ կրնար մտածել՝ առանց բարկութենէս  
դողալու... Ե՛ս միայն մերժուիմ, անյաշող  
քննութիւն տուած համարուիմ... Ե՛ս միայն  
(կը մտածէ):

Փառաստու. — Ա՛հ, մերժեր են զինքը վարձա  
տրելէ. հասկըցայ, հասկըցայ. շատ լաւ բեր  
են (ինքնիշխան անկրօյ):

Պերդիկն. — Եւ այն Ատուլփոսը... այն Ատուլփոսը (բարձր):

### ՏԵՍԻԼ Գ.

Ալեքսիս, գլխարկը գոշխը, գաշազանը ձեռքը, կը փոշրայ դռնս երկրոշ, և Առաջիններն

Ալեքսիս (Ատորիի սևուներ շերտ)։ — Խեղճ տղայ, պատուոյ աստիճանի բարձրանալուն հաճոյքը դառնացաւ իրեն. (դեպ ի դռնը կ'երարայ):

Պերդիկն. — Ինչպէս, ինչո՞ւ:

Ալեքսիս. — Արգելք մի՛ ըլլար, կ'աճապարեմ երթալու:

Պերդիկն. — Ո՞ւր:

Ալեքսիս. — Ո՞ւր, սուր. Փրիմսէր Հազարապետին տունը:

Փաշտոտ. — Փրիմսէր Հազարապետին...

Պերդիկն. — Ինչո՞ւ համար:

Ալեքսիս. — Ներէ, հասարակաց առջեւ հոչալուելու բաներ չեն ընելիքներս... Կ'երթամ տեսնելու՝ արդեօք Հազարապետը ո՞ղջ է թէ մեռած. խեղճ մարդ...

Փաշտոտ. — Մեռած, ո՞վ երկինք:

Ալեքսիս. — Այո՛, լուր կը պտրտի՛ իբր թէ մահացու վէրք ստացած է մենամարտութեան մը մէջ:

Պերդիկն. — Կարելի՛ բան է:

Փաշտոտ. — Մենամարտութեան մէջ ըսիլը:

Ալեքսիս. — Այո՛, պարոն, մենամարտութեան մէջ... Կրողը թող տանի մենամարտն հնարողը... Ներեցէք. (կը մեկնի՝ մեջտեղի դռնէն դռնս փազերով):

Պերդիկն. — Ինչ էր լսածս... Փրիմսէր Հազարապետը մահացո՞ւ վիրաւորուած, և այն օրուան մէջ՝ որ իրեն որդին... (կը խորհի): Փաշտոտ. — Ինչպիսի՞ դժբախտութիւն:

Պերդիկն. — Ո՛հ, ահաւասիկ Ատուլփոս... Ինչպէս տխուր է...

Փաշտոտ (ինքնիշխան). — Բայց ինչո՞ւ այսպիսի վիճակի մը մէջ խեղճը պահանորդուեցին ընելու կը ստիպեն...

### ՏԵՍԻԼ Գ.

Ատորիոս և ուրիշ աշակերտ մը՝ հրացանը ձեռքը, տասնապետն մը առաջնորդուած, և Առաջիններն: — Զինուորական սովորական արարողութեան համաձայն՝ Ատորիոս Փաշտոտ սի տեղը կը բռնէ պանակնորդութեան մէջ:

Փաշտոտ (ինքնիշխան). — Թէ որ թոյլ տրուէր՝ ես ինքս յօժարութեամբ իրեն տեղը պահանորդութիւն կ'ընէի... Խեղճ տղայ. (կը մեկնի տասնապետին և միշտ աշակերտին նկատ):

### ՏԵՍԻԼ Ե.

Ատորիոս պանակնորդութեան մէջ և Պերդիկն

Ատորի (սպառ կը մնայ Պերդիկնի նայելով):

Պերդիկն. — Ատուլփոս:

Ատորի. — Պէրդին, դուն հո՞ս:

Պերդիկն. — Ինչ գարմանալու բան կայ:

Ատոյի. — Տէր Աստուած. ուրեմն ինչո՞ւ թըմբ-  
կի հրաւէրքին դուն ալ չներկայացար. պահ-  
նորդութեան այս ժամուս կարգը քեզի կ'իլ-  
նար (ցառօք):

Պերդիկ. — Ես վարձատրութենէ մերժուած  
մէկն եմ:

Ատոյի. — Մանաւանդ թէ պիտի շանայիր նո-  
րանոր յանցանքներու մէջ չինկնալու. վայր-  
կեաններ կան՝ որ դուն շատ բուն կերպով  
կը վարուիս... բնաւ չես խորհրդածեր որ...

Պերդիկ. — Լուր դրկեցի կանխա՞՛ որ չէի կըր-  
նար ներկայ գտնուիլ, ինքզինքս լաւ չէի ըզ-  
գար:

Ատոյի. — Աստուած ներէ քեզի. ո՞հ, գիտնա-  
յիր թէ ինչպիսի գէշութիւն մ'ըրիւր ինծի  
ասով...

Պերդիկ. — Բայց ես յանցանք չունիմ, վասն-  
զի այն ատեն դեռ լսած չէի քեզի հասած  
զժբախտութիւնը...

Ատոյի. — Ի՞նչպէս:

Պերդիկ. — Դեռ հիմայ քիչ առաջ լսեցի. և կը  
ցաւակցիմ քեզի. այնքան անգութ է ընդու-  
նած հարուածդ՝ որչափ անակնկալ:

Ատոյի. — Վայ ինձ... Ուրեմն դուն գիտես...

Պերդիկ. — Մենամարտութեան խնդիրը. այո՞,  
գիտեմ:

Ատոյի. — Եւ թէ իմ Հագարապետ հայրս...  
(դողդողալով):

Պերդիկ. — Խեղճ Ատուլփոս:

Ատոյի. — Ուրեմն իմ սրտիս բաբախմունքնէ  
ըզ գիտ բնաւ խաբած չէին... Ուրեմն... Ո՞հ,  
հայր իմ... գրեզ յաւիտեանս կը կորսընցը-  
նեմ... Եւ ինծի հրաման չկայ թողելու ինչ  
նալու քու բազկացդ մէջ... վերջին վայր-  
կեաններուդ մէջ միտարելու գրեզ, վերջին

հայրական օրհնութիւնդ ընդունելու... Պէր-  
դին, ի սէր Աստուծոյ կ'աղաչեմ քեզի, թէ  
որ ունիս սրտիդ մէջ զգացմունք սիրոյ և բա-  
րեկամութեան՝ օգնէ ինծի մահացու նեղու-  
թեանս մէջ:

Պերդիկ. — Ի՞նչ կրնամ ընել, ըսէ:

Ատոյի (յաւնձնեղով ակոյր հրացանը և միշտ ի-  
րեղիկները). — Հոս իմ տեղս քիչ մը ժամա-  
նակ դուն պահանորդութիւն ըրէ. այս շնորհ-  
քը քեզմէ կը պաղատիմ...

Պերդիկ. — Սիրով կը կատարեմ... Բայց մը-  
տածէ...

Ատոյի. — Հոգեվարքի մէջ հայր մը՝ մտածե-  
լու տեղիք չի ձգեր. բնաւ բան մը չի կրնար  
փոխարինել ինծի՝ եթէ ես իրեն վերջին վայր-  
կեանիս սիրոյ պահանջած պարտքէս զրկուիմ,  
եթէ իրեն յետին շունչը տուած վայրկեանի՝  
աչքերը չգոցեմ... Ո՞հ, ձայն բնութեան, դուն  
ես սրտի մէջ Աստուծմէ դրուած առաջին և  
սրբագոյն կիրքը... կը զգամ ես քու գերա-  
գոյն ազդեցութիւնդ... և քեզի հետեւելու հա-  
մար նոյն իսկ կեանքս ալ կը գոհեմ. (խեղճիւր-  
մէն դուշու ելած՝ կը մեկնի):

## ՏԵՍԻՒ, 9.

Պերդիկ միայնակ, պաւանորդուշրեան մէջ

Պերդիկ. — Այս ինչ էր որ եղաւ. գրեթէ ես  
ինքս ինծի չեմ հաւատար... Ահա իմ ձեռքս  
է Ատուլփոսի բախտը... Բնաւ մէկը գիտ չի  
տեսներ... (կը զննէ չորս դիմ) Ես կրնամ  
վրէժս առնել... Այս տեղը ձգելու ու փախչելու

բաւական է՝ Ատուփոսի կործանումն ապահովելու համար... (Կը խորհրդածէ՝ կակց աւնկերոյ. նոյն վայրկեակն Կրտստս մեկ դռնէն միւս դռնէն անցնելու առէ՛՛ զարմանքով մը կը նայի Պերդիկի, և առանց անկից տեսնուելու՝ կը քաշուի):... Բայց... չեմ հասկընար ինչո՞ւ սրտիս մէջ Ատուփոսի դէմ առաջուան ունեցած գայրոյթս հիմայ չեմ զգար... Այն թշուառին դժբախտութիւնը՝ հոգւոյս մէջ հանդարտութիւն պատճառեց: Քիչ առաջ ես զինքը մահու-չափ կ'ատէի. նոյն իսկ իրեն առաքինի ըլլալուն համար... Կախանձի զօրեղ կիրք մը՝ զիս հակառակ իմ կամքիս կը բռնադատէր զինքը ատելու. Ո՛հ... Ինչ գէշ բան է ատելութիւնը. կարծես թէ մարդուս սիրտը կը կրծէ... Եւ ընդհակառակն սրջափ քաղցր է սիրոյ զգացումը... սրտիս մէջ կը զգամ ես հիմայ անոր փորձը... Ես՝ որ... (Ի՛նչ ի դուռը դառնալով և նայելով ձեռքէն). Ո՛վ Երկինք. արդեօք տեսածս սխալ չէ... Փրիմնէր Հազարապետը չէ՞ որ Հրամանատարին հետ դէպ ի այս կողմս կու գան... Ուրեմն սո՛ւտ էր տարածուած լուրը... Ուրեմն զիս խաբեցին այս կերպով՝ պահանորդութիւն ընել տալու համար... վրաս խնտալու համար... (Տարցած) Այո՛, ինքն է... ո՛հ, ինչպիսի՞ ուրախութիւն կը փայլի երեսին վրայ... (Ինքնիքնէն դուրս ելած) Ախ, այն ուրախութիւնը իմ նախանձի կրակը կը բորբոքէ... Չեմ կարող դիմանալ... (Չորս կողմը կը նայի՝ թէ արդեօք զինքը տեսնող մը կ'ա՞յ) ... Չէ, զիս տեսող մը չկայ... Կ'ուզեմ՝ իրեն այդ ուրախութիւնը արցունքի դարձընել, ամօթի՛ և վշտաց արցունքներու... (Գողդողդալով՝ հրացակը անկիւն մը կը դնէ) ...

Որոշումս ըրի. փախչիմ. (կը սկսի երրայ... յետոյ կակց կ'առնէ իրքեւ զղացած. կ'ուզէ հրացակը առնել). բայց Հրամանատարին մտնելարուն պատճառաւ ժամանակ չունենարով՝ կը մեկնի կ'աննետանայ):

## ՏԵՍԻԼ Է.

### Հրամանատարն և Հազարապետն

Հրամանատար. — Այո՛, ես ալ ներկայ կ'ուզեմ ըլլալ. դուք պիտի կարդար իրեն պատուոյ շնորհագիրը, և ես ալ իրեն դէմքին վրայ պիտի կարդամ այն սիրոյ զգացումները՝ որ պիտի շարժեն իւր սիրտը, երբոր լսէ թէ ինչպիսի բացատրութիւններով Թագաւորը իւր գոհութիւնը կը յայտնէ իրեն վրայօք:

Հազարապետ. — Իրեն ամենամեծ գոհութեան պատճառը պիտի ըլլայ՝ այդ շնորհագիրը իմ շրթունքներէս լսելը: Լաւ գիտէք դուք թէ նա սրբան զիս կը սիրէ և յարգէ. գուցէ հայրական սրտի փափկութիւնն է որ զիս համոզել կ'ուզէ կարծելու թէ որդիքներու մէջ իրեն հաւասար մէկը չկայ՝ որ ծնողաց վրայ այնքան զգացումն ունենայ:

Հրամանատար. — Մանաւանդ թէ ըսածը ամենաճշմարիտ է: Վարժարանիս այնքան ազնուական և կիրթ պատանեաց մէջ չկայ մէկը՝ որ գերազանցէ զինքը ազնիւ վարմունքով, մտքի սրութեամբ, ուսմանց և իր պարտքերուն մէջ ունեցած եռանդով...

Հազարապետ. — Ուրեմն երթանք իրեն քով. շատ օրերէ ի վեր՝ զանազան կարեւոր և պար-



տաւորիչ զբաղանաց պատճառաւ՝ չկրցայ գալ զինքը տեսնելու, և ինքն ալ նամակով մը իմ ուշանալուս վրայ գանգատեր էր... Բայց ի՞նչ կը տեսնեմ... Հրամանատար, պահանորդութեան տեղը մարդ չկայ... (ամենառեւ զարմանքով):

Հրամանատար. — Ո՛վ Երկինք... մեր խօսակցութեանց զբաղած՝ ուշադրութիւն չէի դարձուցած... Զարմանքէս կ'ապշխմ...:

Հագարայկետ. — Եւ իրաւունք ունիք. պատեւրագմի ժամանակ պահանորդութեան պարտքէն պակսի՛ր... և այն ալ զլիաւոր մուտքի դրան առջեւ... Այսպիսի բան մը ամէն ինչ տակնուվրայ ընել, ամբողջ օրէնքի գաղափարը ոտքի տակ առնել ըսել է (գայրացած):

Հրամանատար. — Ա՛խ, դժբախտաբար իրաւ է, և ես կը կասկածիմ թէ ո՛վ եղած պիտի ըլլայ... (ցաւագիւն):

Հագարայկետ. — Ո՛վ ալ ըլլայ՝ պէտք է պատժել զինքը՝ օրէնքէն պահանջուած բովանդակ խտուրթեամբ:

Հրամանատար. — Ա՛յո. հասարակաց ամենուն օրինակ մը հարկաւոր է՝ զինուորական օրէնքի դէմ եղած այս նախատինքին վրէժն առնելու համար: Իսկոյն կ'երթամ տեղեկանալու թէ ո՛վ է: (Տեսնելով Հարիւրայկետը). ճիշդ վայրկենին հասար, պարոն Հարիւրայկետ (նկղացած):

## ՏԵՍԻՒ Ը.

### Հարիւրայկետ և Աւագիկներն

Հարիւրայկետ. — Ի՞նչ կայ որ...:

Հրամանատար. — Ի՞նչ պիտի ըլլայ. ապշած կը զարմանամ այսպիսի գայթակղութեան մը վրայ...:

Հարիւրայկետ. — Տէր Հրամանատար, ի՞նչ գայթակղութիւն...:

Հագարայկետ (ցոյց տարով նրացակը՝ դրանը քով). — Նայէ՛, տես:

Հրամանատար. — Պահանորդը գէնքը ձգած՝ աներեւոյթ եղեր է:

Հարիւրայկետ (ձեռքովը նարուած մը տարով ձակոխել). — Տէր Ատուած...:

Հագարայկետ. — Ուրեմն գիտէ՞ք դուք թէ ո՛վ եղած է այն վատը՝ որ այսպիսի պախարակելի գործ մ'ըրած է:

Հարիւրայկետ (խեղճիւրով). — Թէ որ պատասխանեմ՝ սիրտը պիտի ծակեմ:

Հրամանատար (ժակրտըրեալք առ Հարիւրայկետ). — Խօսէ՛, յայտնէ՛ յանցաւորին առնունը, որ ենթարկուի պիտոր իմ արհամարհանքիս և արդարութեան:

Հարիւրայկետ. — Տէր իմ... երբոր... չեմ գիտեր ինչպէս... (խեղճիւրով) Ի՞նչ դժուարին դիրքի մէջ կը գտնուիմ:

Հագարայկետ. — Կը շփոթի՞ք դուք... կը տագնապի՞ք...:

Հրամանատար. — Հարիւրայկետ (պաշտօնակոծ): Հարիւրայկետ. — Բռնադատեալ եմ անունը չտալու:

- Հրաւանահատար. -- Այդպիսի պատասխան մը քեզմէ չէի սպասեր (խտտիւ):
- Հարիւրապետ. — Մի՛ սրբողիք. ամենամեծ նըկատմունք մը... (ինքնիշխան) Խեղճ հայր:
- Հագարապետ. — Նկատմունք մը... Օրինաց առջեւ բոլոր մարդկային նկատմունք պէտք է լռեն:
- Հարիւրապետ. — Ճշմարիտ է... խոհեմութիւնը սակայն կը պահանջէ...
- Հրաւանահատար. — Հիմա՞յ հասկըցայ ըսելիքդ. յանցաւորն է այն թշուառական Պէրդինը...
- Հարիւրապետ. — Ո՛չ, Հրամանատար տէր:
- Հրաւանահատար. — Ո՛չ. ուրեմն ո՞վ կրնայ ըլլալ:
- Հարիւրապետ. — Կը խնդրեմ՝ թախանձանօք, այս վայրկենիս մի՛ ստիպէք զիս. (աչքովը ցոյց կու տայ Հագարապետը, որ կ'անդրադարձնայ եղած ակնարկոչքիւնը):
- Հագարապետ. — Ուրեմն ե՞ս եմ որ պէտք չէ իմանամ թէ ո՞վ եղած է յանցաւորը: Լաւ. կը յարգեմ ձեր գաղտնիքին պատճառները, և կ'երթամ որդւոյս քով...
- Հարիւրապետ. — Որդւո՞յդ քով... (տագնապած):
- Հագարապետ. — Այո՛, ի՞նչ կայ. որդւո՞յս քով ալ երթալ ներելի չէ. իրաւունք մ'ունի՞ք զիս արգիլելու (գայրակարմ):
- Հարիւրապետ. — Ո՛չ, այլ կը խնդրեմ, իբրեւ շնորհք կը խնդրեմ ձեզմէ... (ցած ձայնով առ Հրաւանահատարն) Տէր Հրամանատար, Աստուծո՞յ սիրոյն... մի՛ թողուք... պատճառանք մը գտէ՞ք, արգիլեցէ՞ք զինքը... (Հրաւանահատարը կասկածի մէջ կ'իջնայ):
- Հագարապետ (յոզուած կը դիտէ սենեց շարժմունքը և ինքնիշխան կ'ըսէ). — Վայ ինձ...

- ինչպիսի վարագոյր մը աչքերէս կ'իջնայ... Կարելի՞ բան է որ գուցէ...
- Հրաւանահատար (մեկդի քաշկոյով Հարիւրապետը). — Ի՛նչպէս... Չըլլայ թէ յանցաւորն է...
- Հարիւրապետ. — Ատուփոսը:
- Հագարապետ (որ ախանջները սրած՝ մտիկ կ'ընէր, կը գոչէ). — Ատուփոս... Ի՞մ որդիս:
- Հրաւանահատար. — Ո՛չ... մի՛ խոսվիր...
- Հագարապետ (տաքոչքեամբ). — Լսեցի ես, լսեցի. (առ Հարիւրապետն) Դուք ի՞մ որդւոյս անունը տուիք... Ատուփոսն է ըսիք... Ի՞մ որդիս... յանցանքի մէջ ինկնայ... Իւր կեանքին ամենագեղեցիկ վայրկեաններուն մէջ. երբ կը սկսէր ամենափառաւոր ընթացք մը... Բայց ի՞նչ պատճառաւ. այնքան առաքինի պատանի մը... Ի՞մ ամենասիրելի յոյս... Խեղքս կը թողնեմ... չեմ կրնար այս հարուածին դիմանալ... Կը նուալին ուժերս... ո՛հ... կը զգամ որ... կը մեռնիմ. (Կը մտաբերէ կ'իջնայ Հրաւանահատարին բազկացը վրայ, և շուտով մը վարագոյրը կը գոցուի):

## Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Ր Ո Ր Դ

Առաջին Հանդիսին Գահելիճը:

ՏԵՍԻԼ Ա.

Կոստաս և Ալեքսիս տասնուպետր

Ալեքսիս. — Այո՛, սիրելի պարոն. ամէն բան  
իմացեր եմ: Խեղճ Ատուլփոսը քառորդէ մը  
վերջը դարձեր եկեր է և զինքը պատժոյ սե-  
նեկին մէջ բանտեր են... Աքանչելի՛ քաջու-  
թիւն (քրտիկը կը սրբէ):

Կոստաս. — Իսկ այն իրեն դաժան հայրը...  
և ոչ իսկ ուզեր է երեսը տեսնել:

Ալեքսիս. — Հոգ չէ. ես Ատուլփոսի հայրութիւն  
ըրի:

Կոստաս. — Դո՞ւն (ժիծաղերով):

Ալեքսիս. — Այո՛, էս, էս . . . խնտալու կամ  
գարմանալու ինչ կայ... Չէմ՛ կրնար ուզած  
տղուս հայրութիւն ընել . . . Ահա ճակտիս  
քրտինքը թող վկայ ըլլայ՝ որ ձեռքերս ծոցս  
ծալլած չեմ մնացեր: Պէտք եղած դիմումները  
չուտով մ'ըրեր եմ. միթէ՛ համբերելու բան  
էր . . . Այն բարի գաւակը՝ կ'ուզես անմեղ  
հոշակուի, կ'ուզես յանցաւոր, փոքրիկ գլխա-  
ցաւ մ'ալ պիտի չկրէ:

Կոստաս. — Ատո՞ւլած ուզէ՛ որ ըսածդ ըլլայ:

Ալեքսիս. — Ատուլած պիտի ուզէ, քանի որ ես  
ինքս գործին մէջ մտած եմ... Սիրելիս, ինձի  
հետ կատակ ընել չ'ըլլար:

Կոստաս. — Ի՞նչ ըրեր ես ուրեմն Ատուլփի հա-  
մար:

Ալեքսիս. — Ի՞նչ որ ըրեր եմ՝ քիչ ժամանա-  
կէն պիտի տեսնուի:

Կոստաս. — Ուրեմն ի՞նչ:

Ալեքսիս. — Ո՛հ, այլ ես այնքան ապուշ չեմ՝  
որ գաղտնիքներս դուրս հանեմ. մինչեւ այսօր  
այդ յիմարութիւնն ըրի, ասկէց վերջը աչքս  
չորս պիտի բանամ բերնիս վրայ:

Կոստաս. — Քանի որ խնդիրը բարեկամի մը  
վրայօք է, լաւ նայէ...

Ալեքսիս. — Կամ լաւ նայիմ կամ գէշ նայիմ,  
արդէն եղածն եղած է. առաջագրութիւնս  
գրեր եմ, և ետ պիտի չկենամ նոյն իսկ թէ  
որ...

Կոստաս. — Բարձր ազգեցութիւն ունեցող ան-  
ձի մը գուցէ դիմեր ես խօսելու...

Ալեքսիս. — Չեմ խօսած. պարապ խօսելէ բան  
դուրս չ'ելլեր. գրեր եմ գրեր, և ինչպէս որ  
պէտք է:

Կոստաս. — Գրեր ես, որո՞ւն:

Ալեքսիս. — Որո՞ւն, որո՞ւն. ո՞րչափ հետաքրք-  
քիք ես. երբոր ըսի թէ չեմ ուզեր խօսիլ՝ չեմ  
խօսիր:

Կոստաս (իկրեկրեկ). — Նայիմ թէ կրնամ  
բերնէն խօսք դուրս հանել: — (Բարձր) Ու-  
րեմն, մնաս բարով, Ալեքսիս (երբայ կեղծե-  
լով):

Ալեքսիս (իկրեկրով զիկրը). — Նայէ՛, այս եր-  
կուքէն զատ ուրիշ բան կարելի չէ. կամ Ա-  
տուլփոս անմեղ պիտի հրատարակուի, ինչպէս  
որ ես ապացուցեր եմ, և այն ատեն ըսելիք  
չունիմ, և կամ եթէ զինքը յանցաւոր դատե-  
լու խժբժութիւնը պիտի ընեն, այն ատեն...

Կոստաս. — Այն ատեն ի՞նչ...

Այեքսիս. — Անոր յանցանքին պատճառ եղողը՝ պատիժը պիտի կրէ:

Կոտտաս. — Չէ, չէ՛, Ալեքսիս, ի սէ՛ր Աստուծոյ:

Այեքսիս (զարմացած). — Չէ... Ինչո՞ւ համար: Կոտտաս. — Որովհետեւ Աստուծոս բացարձակապէս արգիլէր է՝ որ չյայտնուի իրեն յանցանքին պատճառ եղողին անունը:

Այեքսիս. — Չեմ հասկընար, ի՞նչ տարօրինակ է բան կ'ըսես:

Կոտտաս. — Ըսածս ճիշդ է. հիմայ ես Աստուծոսի քովէն կու գամ: Ինքը ինծի այնչափ աղաչեց այդ բանին համար՝ որ հարկ եղաւ պատուոյ խօսք տամ իրեն՝ թէ բոլորովին լռութիւն պիտի պահեմ. դուն խօսելովդ՝ իրեն, մահուչափ ցաւ պիտի պատճառես:

Այեքսիս. — Բայց արդէն բանը բանէն անցած է. կարելի չէ տուած տեղեկագիրս ետ առնել, այն՝ իւր ընթացքը կատարած է, և հիմայ արդէն յանձնուած է ձեռքը...

Կոտտաս. — Տէ՛ր Աստուած, արդեօք Նախարարին:

Այեքսիս (շուրջ կերպով). — Թագաւորին: Կոտտաս (զարմանքով). — Թագաւորին:

Այեքսիս. — Այո՛, պարոն. դեռ ուրիշ բան գիտնալ կ'ուզէս: Տղաս, Աստուած հօկէ վրայդ, այնչափ վարպետորդի ես՝ որ առանց չուանէ կրնաս սատանան ալ կամ խոստովանցընէ կամ խղղել:

Կոտտաս. — Թշուառական. ինչ ըրեր ես. գուցէ առանց Աստուծոսը փրկել կարենալու, առանց ուզելուդ Պէրդինի կործանման ալ պատճառ պիտի ըլլաս, որ Աստուծի տեղ պահանջողութիւնն յանձն առեր էր, և յետոյ...

Այեքսիս. — Ինչպէս, ինչպէս, ինչպէս... Պէր...

դինը զինքը դաւաճաներ է... Ուրիշ բան հարկաւոր չէ ինծի... Դճուտ, ուրիշ տեղեկագիր մ'ալ (կերպով):

Կոտտաս. — Կեցի՛ր, հոս եկուր... Դուն խելքս առնել կ'ուզեմ... Ուրեմն որոն համար կ'ըսէիր դուն թէ պէտք է Աստուծի յանցանքին պատիժը կրէ. որուն վրայ էր խօսքդ:

Այեքսիս. — Իմ վրաս, որ այն անիծած մենամարտին վրայ ըրած շատախօսութիւններովս պատճառ եղայ խեղճ Աստուծոսին գլխուն եկած փորձանքին... Բայց հիմայ որ անցած դարձածը հասկըցայ...

Կոտտաս. — Աստուծոյ սիրոյն, զիս յանցաւոր մի՛ ձգեր սիրելի Աստուծոսին առջեւ. դուն սրբտէս գաղտնիք մը յափշտակեցիր...

Այեքսիս. — Դուն ալ իմ սրտէս ուրիշ գաղտնիք մը. երկուքնիս ալ հաւասարապէս...

Կոտտաս. — Մտածէ որ նա Մարաշախտ սպարապետի մը որդին է...

Այեքսիս. — Արդարութիւնը պատուոյ տիտղոսներէ վախ պէտք չէ ունենայ. պարոն Պէրդինը...

ՏԵՍԻԼ Բ.

Պերդին և Առաջիկներն

Պերդին. — Հոս իմ վրայօ՞քս կը խօսուի: Այեքսիս. — Այո՛, պարոն, քու վրայօքդ:

Կոտտաս (ցած ձայնով). — Ալեքսիս, խնդրեմ, խոհեմութիւն:

Պերդին (տագնաւորով). -- Արդարութիւնն ինծի հետ ինչ գործ ունի:

Այեքսիս. — Պահ մը ձեռքդ դիր խղճմտանքիդ վրայ, եթէ ունիս...

Պերդիկն. — Անզգամ. այս ինչ կերպ խօսիլ է (տաքնադով):

Ալեքսիս. — Բարի և անվախ մարդու մը կերպ:

Պերդիկն. — Գուն յանդուզն մէկն էս:

Ալեքսիս. — Երբոր ենդիրը ճամարտութիւնն ըսելու վրայօք է՝ ես միշտ կը յանդգնիմ. . . լտեցի. . . հիմայ. . .

Կոստաս (խօսքը կտրելով). — Լո՛ւս կեցիր, ձայնդ մի՛ բարձրացընէր. . . կարելի է մէկը կը լսէ. . .

Ալեքսիս. — Աւելի աղէկ:

Պերդիկն. — Ես քու վրադ չեմ զարմանար. . . այլ անոր վրայ՝ որ հոգ ունեցեր է հոս գալու և զրպարտութիւններ ընելու ինծի դէմ. . . (նայելով Կոստասի):

Կոստաս. — Ուրիշ պարագայի մէջ՝ ո՞վ որ ալ ըլլար խօսողը՝ այդպիսի անմիտ խօսքի մը չէի համբերէր. . . ես առաւել քու խօսքիդ. . . Եթէ ուզէի ըսածիդ պատասխանը տալ՝ բար մը միայն ըսելիքներէս բաւական էր երեսիդ գոյնը նետել տալու. բայց գնա շնորհակալ եղիր. . . որ պատուոյ օրէնք մը զիս կը բռնադատէ լռելու. . . (Կեկեկոյ: Ժամանակ՝ զած Ծայնով կ'ըսէ Ալեքսիսի) կը պողատիմ՝ մի՛ խօսիր:

### ՏԵՍԻՒ, Գ.

Պերդիկն և Ալեքսիս

Ալեքսիս (ինքնիրեն). — Պէտք է խոհեմութիւն բանեցընեմ:

Պերդիկն. — Ի՞նչ փըսփըսաց ականջէդ:

Ալեքսիս. — Չեմ գիտեր:

Պերդիկն. — Մեծ գաղտնիք մը ունիք մէջեր-նիդ. . .

Ալեքսիս. — Կրնայ ըլլալ:

Պերդիկն. — Ես կրնայի գղջալ տալ ձեզի. . .

Ալեքսիս. — Ո՛հ, տարիքն առած մարդու մը խորհուրդին մտիկ ըրէ: Թէ որ չես ուզեր դառնագին կերպով լալ՝ դարձիր մէյ մը քու վրադ մտածէ. դեռ ժամանակ կայ, կրնաս զարմանն ընել՝ եթէ ուզես: Առ այժմ ես լը-սութիւն կը պահեմ. բայց եթէ դուն ինքդ չուզես որոշել քու յանցանքդ յայտնելու, և շուտով խոստովանելու. . . պիտի լսես ձայն մը. . . ձայն մը կ'ըսեմ՝ որ փողահարին ձայնէն աւելի զօրաւոր պիտի հնչէ. . . բաւական է. օգուտ քաղէ տուած դասէս. . . Յարգանք ներս. (կը մեկնի):

### ՏԵՍԻՒ, Գ.

Պերդիկն միայնակ

Պերդիկն. — Ուրեմն ամէն բան յայտնուած է. անխ, իրաւ է, Երկինք պաշտպան կեցեր են անմեղին դատաստանին. Երկինք վրէժ կը խընդրեն փոխարէն բարեկամի մը՝ զոր ես դաւաճանեցի, թէպէտ և ինքը միշտ ազնիւ և սիրալիր եղած է դէպ առ իս. Երկինք պատ-րաստուէր են պատժելու յանցանք մը՝ զոր Ատուլիտս ներեր էր ինծի. . . Ամթալի՛ օրեր ինծի կը սպասեն. . . Իմ խղճիս խայթերը, շատ ուշ արթընցած խղճիս խայթերը՝ իմ դաճիճներս պիտի ըլլան. . . Ա՛հ, ո՛ւր տարաւ ձգեց զիս նախանձի ամենացած կիրքը. . . Բայց ինչո՞ւ

ես լուռ կը կենամ. ինչո՞ւ չեմ վագեր յանցանքս խոտտովանելու. խոտտովանելով՝ կրնամ գէթ ամենէն աւելի առաքինի ընկերս փրկել, ընկեր մը՝ որուն չկրցայ նմանող ըլլալ, և որ պիտի կործանուի որդայական սիրոյ ամենագնիւ ըզ-  
 րացման պատճառաւ... Այո՛, պիտի խօսիմ... Ո՛վ հայր իմ, ահաւասիկ, ահաւասիկ քու իմ վրաս ունեցած գեղեցիկ յոյսերդ... Նուատա-  
 ցած, մերժուած, թագաւորիս դիմաց պատիւս կորսնցուցած և դաւաճանութեան ամօթալի զգեստով ծածկուած... (ձեռքերով երեսը կը գոցէ)... Եւ այս ամէն բան քու անուանդ հովա-  
 նաւորութեան ներքեւ... Ո՛հ, ո՛չ. դեռ որդիդ եմ... Այս թշուառութիւններով՝ որ չորս կող-  
 մըս պատեր են՝ Նախախնամութիւնը ուզեց ջախջախել իմ ունայնասիրութիւնս, իմ ամ-  
 բարտաւանութիւնս. կը լսեմ Նախախնամու-  
 թեան ձայնը և պիտի հպատակիմ իրեն . . . (կը սկսի երբայ)... Ո՛հ, Աստուած իմ... Ա-  
 տուփո՞սը... (կը կենայ)... Երեսը նայելու չեմ համարձակիր. բայց ինքզինքս իրեն արժանի պիտի ընծայեմ, պիտի տեսնէ... (կ'երկ այն դռնէն՝ որուն դիմացի կողմի դռնէն Ատու-  
 փոս ներս կը մտնէ):

## ՏԵՍԻԼ Ե.

### Հարիւրապետն և Ատուփոս

Հարիւրապետ. — Հոս կրնանք կենալ:

Ատուփ. — Ի՞նչ ընելու համար:

Հարիւրապետ. — Այս ամենը վարպետորդու-  
 թիւնն ի գործ կը դնեմ՝ քեզի հաճոյք պատ-  
 ճառելու համար. կ'ուզեմ որ հայրդ...

Ատուփ. — Ի՞նչ կը մտածես, պիտի գա՞յ վեր-  
 ջապէս գիտեսնելու, ինծի ներուճն տալու  
 (եռանդեալ):

Հարիւրապետ. — Ո՛հ, բնաւ մի տարակուսիր:  
 Պատուիրեցի տասնապետին որ զինքը այս սե-  
 նեկէն անցընէ պատճառանքով մը, այնպէս որ  
 չկատկածի մեր դիտաւորութեան վրայ:

Ատուփ. — Այս շնորհքին համար միշտ երախ-  
 տագէտ պիտի ըլլամ ձեզի. բայց չեմ ուզեր  
 որ այս բանիս համար Հրամանատարը...

Հարիւրապետ. — Հրամանատարը բացակայ է  
 վարժարանէս, ուստի համարձակեցայ քիչ  
 մ'առնել զքեզ բանտէդ դուրս հանելու:

Ատուփ. — Ո՛ւր գնացեր է:  
 Հարիւրապետ. — Կարծեմ թագաւորին քով:  
 Ատուփ (վշտացիկ). — Թագաւորին... Ա՛խ, ա-  
 մէն բան ուրեմն կորսուած է:

Հարիւրապետ. — Բոլորովին հակառակը, սի-  
 րելիդ իմ Ատուփոս. հիմայ քու խնդրոյդ վը-  
 րայօք լաւ յոյսեր ունիմ. Հրամանատարին  
 սիրտը քեզի ծանօթ է...

Ատուփ. — Իրաւ է, բայց ես զինքը տհաճե-  
 ցուցի:

Հարիւրապետ. — Տհաճեցուցիր. ինչո՞ւ համար:

Ատուփ. — Որովհետեւ կ'ուզէր բացարձակա-  
 պէս՝ որ ես յայտնէի իրեն ինծի դէմ դաւա-  
 ճան գտնուող ընկերս:

Հարիւրապետ. — Իսկ դո՞ւն:

Ատուփ. — Բացարձակապէս ժխտեցի յայտնել:  
 Հարիւրապետ (նաւաշքով ձեռքը ուսիկ վրայ  
 դնելով). — Ապրի՛ս. ըստ ամենայնի պա-  
 տուաւոր երիտասարդի մը պէս վարուեր ես:

Ատուփ. — Բայց Հրամանատարը բարկացաւ:  
 Հարիւրապետ. — Դուրսընաց, սակայն սրտին  
 մէջ ապահովապէս գոված է ըրածդ:

Ատուրի. — Ի՞նչպէս:

Հարիւրապետ. — Դուն անարժան գործ հա՛մարեր ես՝ անպատիւ միջոց մը գործածել՝ նե՛ղութենէ ազատելու համար. իսկ ինքը՝ որ այնքան կը զգուի վատութեան գործերէ՛ որչափ կը յարգէ ազնիւ հոգիներու պատուաւոր վարմունքը, ոչ միայն պախարակած չէ գրեզ մտրով, այլ նաև ըրած այդ ընթացքը քեզի ի բարին պիտի գործածէ իբրև փաստ մը: Կա գիտե՞ս թէ Նորին Վեհափառութիւնն սրբան կը յարգէ զինքը. ինքը բարեխօս պիտի ըլլայ, և դուն ներումն պիտի գրտնես: Թագաւորին զթութիւնը՝ յանցանքը պիտի չուզէ տեսնել, այլ անոր ազնուական պատճառը: Այսքան սաստիկ, այսքան փափուկ որդիական սիրոյ զգացում...:

Ատուրի (նեժեժելով). — Անարժան ըրաւ զիս հօրս սիրոյն:

Հարիւրապետ. — Ա՛չ երբեք. հանդարտ բռնէ սիրտդ. հայրդ գուցէ երբեք հիմակուրնէ աւելի զքեզ սիրած չէ: Իրեն սկզբունքներու խտութիւնն, զինտօրական օրինաց համար ունեցած նախանձխնդրութիւնը զինքը բարկացուցին, բայց այդ բարկութիւնն՝ զէպ ի քեզ ունեցած սէրէն կը բլլէ... Սիրտդ ամուր բռնէ, արիացիր. ահա ինքը կու գայ... (Ատուրիսու Հարիւրապետին կռնակի կողմը կը ծածկուի):

## ՏԵՍԻԼ Զ.

Ալեքսիս, Հագարապետն և Առաջիկներն

Ալեքսիս. — Ահաւասիկ տէր Հարիւրապետ...:

Հագարապետ. — Ինձմէն ի՞նչ կը փափաքիք...:

Ատուրի (ստքն ինկնալով). — Հայր իմ, հայր իմ:

Հագարապետ. — Ի՞նչպէս... այս ի՞նչ խաբէ՞ս-

թիւն է... Ձեր վրայ կը զարմանամ, տէր Հա-

րիւրապետ (ես ետ երբարով):

Հարիւրապետ. — Պէտք էիք զարմանալ՝ եթէ

ուրիշ կերպ գործէի:

Հագարապետ. — Ա՛հ...:

Ատուրի (Հագարապետ ձորը ձեռքէն բռնելով).

— Ներումն կը խնդրեմ. մի՛ թողուք որ ցա-

ւէս մեռնիմ:

Հագարապետ (յուզուած). — Դուն, դուն. ա-

պերմխտ որդի. (երեսը մեկդի կը դարձրէ):

Ատուրի (չերնալիկն հստկոյունը կը դրոշմէ ձորը

ձեռքին վրայ, միևիւրեւ Հարիւրապետին և

Տասնապետին մեկնիր):

Հարիւրապետ (առ Ալեքսիս). — Ազատ թողունք

զիրենք. բնական զգացումը իւր իրաւունքը

ձեռք բերելու համար՝ մեզի կարօտութիւն

չունի. մտնենք քովընտի սենեակը:

Ալեքսիս (ինքնիշխմ). — Այո՛, անկէց կ'ուզեմ

տեսնել ի՞նչ վերջ պիտի ունենայ այս տեսա-

րանը. (կը մեկնի):

## ՏԵՍԻԼ Է.

## Հագարայեան և Ատորիս

Ատորի. — Ա՛խ, այս ջերմագին համբոյրներովս որ հայրենի ձեռքիդ վրայ կը դրոշմեմ, կ'աղաչեմ...

Հագարայեան. — Թող ձեռքս... (կ'ոչգի ևս քաշել ձեռքը, բայց սիրտ չ'ընկեր):

Ատորի. — Ողորմէ՛ իմ վիճակիս վրայ... ողորմէ՛ թշուառի մը որ քու որդիդ է (եւանդիւտը):

Հագարայեան. — Ի՞մ որդիս. դուն անարժան ըրիր գրեզ այդ կոչման...

Ատորի. — Ո՛չ, հա՛յր իմ...

Հագարայեան. — Իմ որդիս երեք պիտի չմոռնար իր սրբազան պարտքերը, իմ որդիս տարտափէր պիտի յանցանք մը գործելու...

Ատորի. — Վայրկեան մը ինքզինքս կորսնցուցի. քու կեանքիդ վտանգին գոյժը, վախ՛ որ առանց վերջին գգուանքդ ընդունելու, առանց հայրենի օրհնութիւնդ ընդունելու՝ պիտի յափշտակուէիր ինծմէն, սիրտս տակնու վրայ ըրին և խելքս ինծմէն վերցուցին: Աչքիս առջև ալ չտեսայ այն անպատուութիւնն և պատիժը՝ որ պահուած էր ինծի համար... Ես տեսայ միայն (չալագիւն) անգարմանելի կորուստը ամենասիրելի և ամէն յարգանքի արժանաւոր հօր մը... որ զիս կը դատապարտէ հիմայ ամենաջերմն և գերագանց որդիական սիրոյ զգացման համար...

Հագարայեան (իկրկիրէն). — Ա՛լ չեմ կրնար դիմանալ: — (Քարձր) Ոտք ելի՛ր:

Ատորի. — Առանց քու ներումդ ընդունելու՝ հոս, հոս քու ոտքերուդ պլլուած պիտի մնամ. այս դիրքն է ինծի պատշաճը...

Հագարայեան. — Ոտք ելի՛ր... (յուզուած կրկնայի երևար) կը խնդրեմ:

Ատորի. — Կը հնազանդիմ (ոտք կ'երդ):

Հագարայեան. — Ահաւասիկ, ահաւասիկ այն միտիժարութիւնները որ քեզմէ կը յուսայի... (արտասուշագիւն մաքրր սրբերով): Գուն զիս ամենաթշուառ մարդն ըրիր աշխարհիս վրայ... և ինչպիսի՞ վայրկենի մէջ... այն վայրկենին՝ երբ ունենալիք վիճակիդ վրայ պիտի պարծէի, երբ դուն առաքինի երիտասարդութեան օրինակ) մը պիտի համարուէիր, երբ Թագաւորին բարեհաճութիւնը սահմաններ էր գրեզ բարձրացընելու այն ամենամեծ աստիճանին՝ որուն քու հասակիդ և վիճակիդ մէջ եղող մը կրնար բաղձալ և յուսալ... Ահաւասիկ տես (յոյց կուտայ արքունի շնորհագիրը)... Ա՛խ, Աստուած իմ, ինչպիսի՞ աւսոթ...

Ատորի. — Ո՛չ, հա՛յր իմ, ըրած յանցանքիս մէջ բնաւ ամբնջալու բան չկայ. ամենէն աւելի նուիրական զգացման սկզբունքէ մը առաջ եկած է այն, և կրնամ ըսել՝ որ անող գրեթէ գրեթէ պիտի կարենամ պարծիլ:

Հագարայեան. — Պարծիլ:

Ատորի. — Այո՛, այդ սկզբունքով է որ ես ամէն բան գոհեցի քեզի համար. սիրտս քեզի մեծագոյն և աւելի անկեղծ մեծարանք մը երբեք ըրած չէ՛ քան այն ժամուն որ ես գրեզ ամէն մարդկային ակնածութիւններէ և անձնասիրական հաշիւներէ գերագանց բռնեցի: Բնութեան զգացումները մոռցընել տուին ինծի օրինաց խտուութիւնները. զինուորական



պարտքէս պակօսեցայ՝ որդիական պարտքս կատարելու համար. և Աստուած, այո՛, Աստուած զիս վարձատրեց ըրածիս համար. ինքը զիս ազատեց ամենէն աւելի սարսափելի տանջանքէն՝ որով կրնայ չարչարուիլ կենդանի էակ մը: Հաւատա՛, հայր իմ, որ երբ ստուգեցի թէ մենամարտին մէջ, և այն ալ թեթեւ կերպով վիրաւորուողն՝ ուրիշ Հազարապետ մ'եղած էր, և թէ դուք ողջ առողջ էիք . . . ուրախութեան արբեցութիւն մ'եկաւ վրաս, սրտիս մէջ գեղաւ այնպիսի հաճոյքի հեղեղ մը, որ չէ կարելի երկրաւոր այս թշուառ կեանքիս մէջ մարդս երկրորդ անգամ մ'ալ ունենայ . . .

Հազարապետ (իւրօրինակ). — Առանց ուզելու՝ արցունք կը թափեմ:

Ատոյի. — Կու լաս դուն, հայր իմ . . . Ո՛հ, այո՛. այդ լացին մէջ կը կարգամ ես քու ներումդ . . . Ա՛խ, տարածէ դարձեալ այն սիրալիք բազուկներդ, սեղմէ զիս դարձեալ հայրական սրտիդ վրայ. այն ժամանակ միայն պիտի կարենամ անվախ դիմագրաւել ինձի համար տրուելիք վճռոյն, ըլլայ այն՝ նոյն իսկ մահուան վճիռ:

Հազարապետ. — Այո՛, եկուր բազկացս մէջ, ընդունէ՛ ողջագործարարս, որդեակ իմ:

Ատոյի (չի զգաղմաւր ձգելով իւրօրինակը Հազարապետին բազկաց մէջ). — Շնորհակալ եմ քեզի, երկնային գթութիւն . . . շնորհակալ եմ . . . դեռ հայր մ'ունիմ:

Հազարապետ (ցաւազիւ). — Որուն ձեռքէն սափայն բան չի գար՝ քեզի օգնելու համար:

Ատոյի. — Աստուած մը կայ վերը՝ որ կ'օգնէ թշուառներուն, և անմեղութեան դէմ եղած անիրաւութեան վրէժխնդիր կ'ըլլայ:

Հազարապետ. — Անմեղութեան . . . Բայց պահանորդ մը որ ձգէ իւր տեղը և դատալիք ըլլայ . . .

Ատոյի. — Ո՛հ, հայր իմ, ես դատալիք չեմ եղած:

Հազարապետ. — Ի՞նչպէս:

Ատոյի. — Ուրիշ մը իմ տեղս դրի, և կայծակի երագութեամբ դարձայ վերստին տեղս բռնելու:

Հազարապետ. — Ճշմարիտ է ըսածդ (զարմանքով և չի ուրախութեամբ):

Ատոյի. — Սուտ գուրցելու անկարող եմ. կը ճանչնաս զիս:

Հազարապետ. — Ո՛վ ուրեմն այդպէս անարժան և անգութ կերպով դաւաճանեց զքեզ:

Ատոյի (իւրօրինակ). — Ինչպիսի՞ հարցումն:

Հազարապետ. — Կը տագնապիս. չէ՞ս խօսիր. ախ, ուրեմն դուն զիս խաբել կը ջանաս:

Ատոյի. — Խաբել . . . Ես զքեզ խաբեմ:

Հազարապետ. — Յայտնէ ինձ ուրեմն անոր անունը:

Ատոյի (վնասկաւ ձայնով). — Ներէ՛, հայր, չեմ կարող:

Հազարապետ. — Թշուա՛ռ դու . . . հօր մը այդպէս պատասխան կը տրուի:

Ատոյի. — Սրբական երդում մ'ըրած եմ առունը չըսելու:

Հազարապետ (կրակոտ կերպով). — Որո՞նք երդուրնցեր ես:

Ատոյի (ժանրոշրեամբ). — Ես ինձի:

Հազարապետ. — Ուրեմն նպատակ դրած ես քեզի ամէն կերպով զիս բարկացնել:

Ատոյի. — Զքեզ բարկացընել . . . Ընկեր մը ամբաստանել չուզելս զքեզ կը բարկացընէ: Փրիմնէր Հազարապետին որդին բնաւ յանձն

պիտի չառնէ այդպիսի անարժան գործով մը արատաւորելու իւր անունը:

Հագարայկեա . — Բայց քու դաւաճանդ թըշնամի մ'է:

Ատորի . — Այն վտեմ կրօնքը՝ որուն մէջ կըրթեցիր զիս՝ կը հրամայէ թշնամեաց ներումն չնորհելու . . . մանաւանդ թէ սիրելու զանոնք . . .

Հագարայկեա . — Բայց մի և նոյն կրօնքը՝ մի թէ չի պատուիրեր հաւատարմաց հնազանդելու նաեւ հօր մը հրամանին:

Ատորի . — Այո՛, բայց երբոր արդար բան մը կը պատուիրէ, երբոր աւելի սրբազան պատճառներ հակառակը չեն պահանջեր (ևռանդով):

Հագարայկեա . — Ինչ աւելի մեծագոյն պատճառներ կրնան ըլլալ՝ պատուոյ և կեանքի վտանգի պատճառներէն:

Ատորի . — Կ'արհամարհեմ այն կեանքը, որուն վայելքը՝ ամենավատ գործէ մը ինծի պիտի պարգևուի. կը գարշիմ անուանարկութեան արժէքով գնուած պատիւներէն: Ոչինչ, հայր իմ, ոչինչ բնաւ պիտի չկարենայ ետ կեցընել զիս իմ սուրբ առաջադրութենէս: Կրցայ դէմ կենալ իմ ազնիւ վարիչիս՝ բարի Հրամանատարին թախանձանաց, նա որ միշտ լի ազնուութեամբ և սիրով վարուեր է հետս: Դէմ պիտի կարենամ կենալ նոյն իսկ այն վեհագոյն Իշխանութեան՝ ուսկից կեանքս կը կախուի, առանց գոյնս նետելու՝ պատժոյն խտուութեան առջեւ, առանց յուսադիր շողմներու առջեւ տատամսելու: Առաքինութիւնը փորձերու մէջ կ'ամրապնդի, և վա՛յ, վա՛յ ա՛նոր որ առաջին անոր դէմ եղած բաղխումներուն տեղի տայ . . .

Հագարայկեա (յուզողաձ) . — Այս զգացումներդ . . .

Ատորի (աւելի աշխուժով ձօրը խօսքը կտրելով) .

— Քուկիններդ են, հայր իմ. դուն զիս ա՛նոնց մէջ կը թեցիր, դուն զանոնք սրտիս մէջ շնչեցիր: Յետոյ այս համբաւաւոր վարժարանիս վարիչներուն ձայները, ուսուցիչներուն խնամքները զանոնք աւելի եւս զօրացուցին՝ իմաստուն խրատներով և բարի օրինակով: Ինչ բանի պիտի գային ուրեմն այնքան հոգու ինամք, այնքան փրկաւէտ օրէնքներ, եւ թէ յետոյ հարկ պիտի ըլլար առաջին հակառակ հարուածին առջեւ զո՛հ ինկնալ: Լռելովս՝ կրնամ ես անզոյշ ընկեր մը փրկել, և ինծմէ կը պահանջուի անոր կորուստը . . . Ո՛հ, ո՛չ, կ'աղաչեմ, մի՛ ուզէք վրդովել հոգւոյս խաղաղութիւնը. թողուցէք որ բարեգործութեան մը առաջին յաղթութիւնս կատարեմ: (Ծանրուշքով): Ո՛չ, չեմ դներ ես կըշիռքի մէջ շքազգեստ մը և վատանուութիւնն:

Հագարայկեա (սատուիկ զգածուած) . — Ո՛վ երկինք, ինչպիսի՞նք որդի մը կը կորսընցընէ:

Ատորի . — Ո՛չ, դուք զիս պիտի չկորսընցընէք. արդարասէր է թագաւորն, և պիտի չուզէ պատժել յանցանք մը՝ որ չար նպատակով մ'եղած չէ. այլ որդիական սիրոյ զգացմունքով: Ինչ ալ որ հանդիպելու ըլլայ՝ կայ տակայն մէկը որ վերը երկընքէն կը հօկէ թշուառներուն վրայ. հոն վերը կայ մէկը . . .

## ՏԵՍԻՒ Բ.

## Աղերսիս և Առաջիններն

Աղերսիս (յանկարծ ներս մտնելով). — Իսկ հոս փարն ալ ուրիշ մը կայ, որ կարող է...

Հազարապետ (գարնացած). — Ի՞նչ կ'ըսես:

Աղերսիս. — Կ'ըսեմ որ թէպէտ և ես խեղճուկ մէկն եմ, բայց կրնամ ճշմարտութիւնը ճանչցընել. ես ամէն բան լսեցի քովի սենեկէն...

Հազարապետ. — Ի՞նչպէս:

Աղերսիս. — Այո՛, տէր Հազարապետ, ամէն բան լսեցի. և եթէ այս խեղճ երիտասարդը չափազանց փափկանկատութեամբ՝ խօսիլ չ'ուզեր, ես ինքս պիտի խօսիմ՝ որ այնքան փափուկ մէկը չեմ...

Ատողի. — Ո՛հ, ո՛չ, ի սէր Աստուծոյ...

Աղերսիս. — Մանաւանդ թէ Աստուած է որ այդ մտածութիւնն ինձի ներշնչեց: Կարճ ըսեմ, տէր Հազարապետ. դուք կ'ուզէք գիտնալ ուրեմն թէ ո՞վ դաւաճանեց որդիդ, այնպէս չէ՞... (յոխորտոշեամբ):

Հազարապետ (ծանրոշքեամբ). — Ո՛չ:

Աղերսիս (գարնակրով). — Ի՞նչպէս, չէ՞ք ուզեր գիտնալ:

Հազարապետ (ծանր). — Ո՛չ, կ'ըսեմ դարձեալ:

Աղերսիս. — Իսկ ես ըսել կ'ուզեմ, կ'ուզեմ անուանել՝ նոյն իսկ եթէ...

Հազարապետ (ուժով). — Չայնդ քաշէ՛, և դուրս ելի՛ր:

Աղերսիս (խրել շանրանար եղած). — Ե՛ս...

Ատողի (գրկելով իշր հայրը). — Ա՛խ, սիրելի

հայր իմ... Եւ ի՞նչպէս կարելի է չաշատել զքեզ...

Աղերսիս. — Ուրեմն պէտք է դուրս ելլեմ:

Հազարապետ. — Այո՛:

Աղերսիս (խեղճիրեն, դուրս երրապով). — Ա՛հ, շատերը տեսակ մը ծառայութիւններով իրենց բախտը կը շինեն... իսկ ես աղէկութիւն մ'ընել ուզելուս համար... (մեկնիլ ուզած վայրկենի՛ն՝ դիմացը կ'եղլեն հետեւեալներն):

## ՏԵՍԻՒ Թ.

Հրամանատարը, Հարիշրապետը և

Առաջիններն

Հրամանատար (կեղծ սպառնալիքով առ Աղերսիս). — Յարմար ատենին կը գտնեմ զքեզ:

Աղերսիս (խեղճիրեն). — Արդեօք ի՞նչ նոր ծախորդութիւն կայ. (խոժոռած կը կրակակի):

Հրամանատար. — Յարգանքներս, տէր Հազարապետ. (յետոյ ահանչեն կ'ըսեն) բարի՛ լուրեր:

Հազարապետ. — Իրա՛ւ (ուշախոշքեամբ. իսկ Հրամանատարը նշան կ'ընեն իրեն լուռ կենարոշ):

Հարիշրապետ (ցած առ Ատողիս). — Ուրախացիր:

Ատողի (գոնոշքեամբ). — Իրա՛ւ կ'ըսես:

Աղերսիս (խեղճիրեն). — Ես բան չեմ հասկընար:

Հրամանատար. — Նստեցէ՛ք (կը նստին): —

Առաջ եկու՛ր (առ Աղերսիս):

Աղերսիս. — Ահաւասիկ եմ:

Հրամանատար. — Ըսէ՛ ինծի. տեղեկագիր մը  
դրկէր ես Նորին Վեհափառութեան:

Ալեքսիս (մխիթարոյձ). — Այո՛, տէր:

Հրամանատար. — Բայց ի՞նչ կերպով գրածդ  
Թագաւորին ձեռքն հասուցիր:

Ալեքսիս. — Ամենապարզ կերպով. գրածս ծրա-  
րի մը մէջ գոցեցի, և արքունի սենեկապանին  
տուի՛ ըսելով որ քեզմէ՛ ղրկուած նամակ մ'է:

Հրամանատար. — Յանդուգն, և ո՞վ տուաւ  
քեզի այդպիսի արտօնութիւն մը:

Ալեքսիս. — Ոչ ոք. ես ինծի կատարեցի. խըն-  
դիրը շատ ստիպողական էր, և եթէ այդպէս  
չընէի՛ ուրիշ կերպով բան չէի կարող ընել.  
գիտեմ թէ ինչ երկար արարողութիւններ  
պէտք են...

Հրամանատար (խտուրչիւն ձեռացնելով). —  
Բայց Թագաւորին կը գրուի՞ այդպէս երեք  
անգամ կրկնուած՝ շուտն՛վ, շուտն՛վ, շուտն՛վ:

Ալեքսիս. — Արդէն ըսի՛ թէ խնդիրը շատ ստի-  
պողական էր:

Հրամանատար. — Իսկ եթէ Թագաւորը այդ-  
պիսի յանդգնութեանդ համար հրամայէր որ  
զքեզ հրացանի բռնեն:

Ալեքսիս. — Թագաւորը՛ որ գիտենք թէ սրբան  
արդարասէր է՛ այդպիսի բան պիտի չընէր.  
Իսկ եթէ այդպէս հրամայելու ալ ըլլար՛ շատ  
փոյթ չէի ըներ. արդէն ես այն տեղեկագրիս  
մէջ իբրեւ շնորհք մը խնդրեցի զայն իրմէն.  
Կամ շնորհի համար, կամ արդարութեան հա-  
մար հրացանի զիս բռնել տան՛ տարբերութիւն  
չունի:

Հրամանատար. — Ի՞նչ կ'ըսէք, տէր Հագա-  
րապետ:

Հագարապետ. — Ես բան չեմ հասկընար:

Հրամանատար. — Հիմայ պիտի հասկընար:

Ալեքսիս. — Ես ինքս ըսեմ թէ գործն ինչպէս  
եղած է...

Հրամանատար. — Չայդ քաջէ՛:

Ալեքսիս (վիրաւորոյձ. ինքնիրեն). — Ամէն  
մարդ ալ ինծի՛ Չայդ քաջէ՛:

Հագարապետ (առ Հրամանատարն). — Խօ-  
սեցէ՛ք ուրեմն:

Հրամանատար. — Մեր խեղճ Ատուփին դըժ-  
բախտութենէն յետոյ՛ փութացի Թագաւորին  
ներկայանալու, մտերմաբար յայտնելու իրեն՛  
եղած յանցանքին պատճառը, շարժելու Նորին  
Վեհափառութեան զթատիրութիւնը և ներման  
շնորհքը խնդրելու:

Ատուփի (աստիկ յոչոյձ). — Ագնուասիրտ  
պաշտպան իմ:

Հագարապետ (առ Հրամանատարն). — Այս  
վարմունքդ պատիւ կը բերէ սրտիդ բարու-  
թեան:

Հրամանատար. — Նորին Վեհափառութիւնն ը-  
սածնէրս հանդարտութեամբ մտիկ ընելէ վեր-  
ջը, իբրեւ քաջածանօթ մը հանդիպածին, ին-  
ծի տուաւ այս թուղթս՝ որ կարդամ. (ցոյց  
կու տայ. յետոյ առ Ալեքսիս) կը ճանչնամ:

Ալեքսիս (զրկնելով). — Այո՛, տէր, կը ճանչ-  
նամ. իմ գրածս է: Ի հարկէ եղածը գիտէր  
Թագաւորը, այնքան պարզ գրեցի իրեն, որ...  
Հագարապետ. — Ի՞նչ գրուած է ուրեմն այդ  
թղթին մէջ:

Հրամանատար. — Կարդա՛ զայն, Հարիւրա-  
պետ:

Ալեքսիս (առ Հարիւրապետն). — Լաւ արտա-  
սանէ՛:

Հարիւրապետ (կը կարդայ). — «Վեհափառ  
Տէր. զիս հրացանի բռնել հրամայեցէ՛ք, կամ  
եթէ կը հաճիր՝ զիս կախել տուէք. ես երախ-

տագէտ պիտի ըլլամ Զեզի այդ շնորհքին համար՝ մնացած կեանքիս մէջ. (առեկքը կը ծիծաղիկ): Բայց լսեցէք նախ ինչիրքիս պատճառը. չարիք մը գործեր եմ, բայց առանց ուզելուս, որովհետեւ Ալեքսիս տասնապետը բնաւ մէկու մը չարիք ըրած չէ, թէ և ճշմարիտն ըսելով՝ բնաւ մէկէ մ'ալ դեռ բարիք ընդունած չէ»:

Հրաւանատար. — Այս ըսածովդ ամբողջ մարդկութիւնը ծաղր կ'ընես:

Ալեքսիս. — Թող ներէ ինձ ամբողջ մարդկութիւնը, բայց իրն այդպէս է:

Հրաւանատար. — Առջ ամբողջ Հարիւրապետ:

Հարիւրապետ (կը կարդայ). — «Գուն ըսելիքիս դառնամ: Գրտէք, վեհափառ Տէր, ինչո՞ւ խեղճ Ատուփոս Փրիմէնք գործեր է այդ անմտածողութիւնը. — անոր համար՝ որ պէտք եղածէն աւելի երկայն լեզու մ'ունիմ. (Հազարապետն և Ատուփոս յուզմունք կը յայտնեն). բայց թէ որ Զեր վեհափառութիւնը սանձ մը չդնէ մենամարտութեանց, վէջքը խղիւսայթ կը դառնայ, և անկէց վերջը ո՞վ կրնայ թող ապրի: Ատուփոս ինձմէն լսեց թէ իւր Հազարապետ հայրը մենամարտի մը մէջ մեռած էր, բնականաբար վազեց անոր օրհնութիւնն առնելու, ուրիշ մէկը իրեն տեղ պահանորդ թողլով: Ահաւասիկ բոլոր եղելութիւնը: Վեհափառ Տէր, ծանր յանցանք մը պիտի համարիք այս ըրածը... Գուր որ այնքան զգայուն սիրտ մ'ունիք, եթէ միեւնոյն դիպուածին մէջ գտնուած ըլլայիք, ոչ միայն պահանորդութեան տեղերնիդ պիտի թողուիք, այլ նաեւ զէնքերն ու պայտուակը ուտերնիդ պիտի վազէիք երթայիք». (առեկքը կը բռնադատեն իրենք զիրենք խնուայնիկ զարկուռ համար)...

«Աւրեմն այն խեղճ զաւակը յանցաւոր չէ, և կամ շատ շատ՝ անմեղ յանցաւոր մ'է: Տեսէք ես ինչ կը մտածեմ, վեհափառ Տէր. դուք փոխանակ պատժելու՝ վարձատրելու էք զինքը: Բարի զինուոր մը չի կրնար սիրել իւր թագաւորը՝ եթէ չսիրէ իւր հայրը և հարկ եղած ատեն ինքզինքը վտանգի մէջ չդնէ անոր համար: Ատուփոս գոհար մ'է, անգին մարգարիտ մ'է, անոր մէկ մագին ալ դպչիլը լաւ գործ մը պիտի չըլլայ: Աղերսաթղթիս ստորագրողը շատախօս մ'եղաւ, որ անոր գլուխը տաքցուց. եթէ զիս ուզէք կախաղան հանել տալ՝ տէր էք, և ես այդ բանը իբրեւ շնորհք մը պիտի համարիմ՝ անմեղ մը ազատելու համար, և թող Աստուած վարձքս տայ: Ինչպէս վերը՝ այսպէս նաեւ թղթոյս վարն ալ աղերսանօք կը ստորագրէ... Տասնապետ Ալեքսիս»:

Հրաւանատար. — Ա՛հ, ինչ կ'ըսէք դուք ուրեմն այս ըրածին համար:

Ատուփ. — Ես հիացմունքէս և գորովանքէս կուլամ. (կ'ողջագուշէր Ալեքսիսը):

Հազարապետ (առ Ալեքսիս). — Գուն, դուն ուրեմն այդքան հոգեւոյ մեծութեան տէր ես:

Ալեքսիս. — Ալ հիմայ չես ըսեր ինձի. Զայնդ քաշէ, դուրս ելիք. (ձեռացրիկով Հազարապետի կերպը). — Բայց լսենք, յետոյ ինչ կու գայ. Գորին վեհափառութիւնն վճիռը սուա՞ւ. շնորհեց թէ չէ՞ այս բարի զաւակին (ցուցնելով Ատուփի) յանցանքը... ինձի համար ինչ որոշումն ըրաւ... վերջապէս ամէն բան թող պարզուի:

Հրաւանատար. — Ահաւասիկ երկուքնուդ համար ալ տրուած որոշումը. (չուրս կը հանկրաշարք մը և կը կարդայ). «Թագաւորը յետ գիտնալու Փրիմէնք Ատուփոսին առաքինի

զանցառութիւնը՝ զինքը կ'արձըկէ յանցանքէ,  
և կը վերահաստատէ իրեն շնորհուած նախ-  
կին աստիճանին մէջ, որ է սպայ Արքունա-  
կան-գորախմբին»:

Ալեքսիս. — Կեցցէ թագաւորը... Իր վեհու-  
թեան և արժանիքին համաձայն վճիռ տուեր  
է, ինչպէս որ իրեն կը վայլէր. կեցցէ, հա-  
զար կեցցէ:

Հրամանատար. — Իսկ գալով քեզի...

Ալեքսիս. — Արդեօք մշտնջենաւոր աշխատու-  
թեան կը դատապարտէ... Բնաւ փոյթս չէ:

Հրամանատար. — Ահաւստիկ արքունի պատ-  
ճէնին շարունակութիւնը. «Ի նկատի առնելով  
յետոյ այն երեք հատ շոտոյնները, որ դրոշ-  
մուած են տասնապետին թղթին վրայ, կը  
հրամայենք որ շուտով, շուտով, շուտով...  
(ժպտելով կը կենայ):

Ալեքսիս. — Ինչ բան:

Հրամանատար. — «Իրեն թոշակը կրկնապատ-  
կուի»: — (Հասարակաց գոշարքոչքիւն):

Ալեքսիս. — Թոշակը կրկնապատկուի... (ուշա-  
խոշրեան յոշգմուռնքով) Կերեցէք, մինչեւ որ  
աչքովս չտեսնեմ՝ չեմ հաւատար. (կը մօտե-  
նայ հրամանակար կարդարոչ):

Հարիւրապետ. — Ինչ տարօրինակ մարդ:

Հագարապետ. — Բայց վեհանձն սիրտ մ'ունի:

Ատորի. — Ստուգի՛ր վեհանձն:

Ալեքսիս (կարդալէն ետքը). — Այո՛, տէր, թո-  
շակը կրկնապատկուի... Եւ որո՞նք լեզուն  
կրնայ այսպիսի գթութեան մը համար շնոր-  
հակալ ըլլալ ինչպէս որ պէտք է. իրաւ է որ  
լեզուս բաւական երկայն է... Բայց...

## ՏԵՍԻԼ Ժ.

Կոստաս, Փաշտոս, Պերդիկե  
ոչրիչ Աշակերտներ և Առաջիկներն

Կոստաս (դրսէն). — Մտի՛ր, մի՛ վախեր:  
Փաշտոս (կոյնպէս). — Մենք ալ միասին կու  
գանք...

Պերդիկե (կոյնպէս).. — Ոտքէս գլուխս կը դո-  
ղամ:

Հրամանատար. — Ո՞վ կայ հոն:

Կոստաս (դրսէն). — Մենք ենք:

Փաշտոս (կոյնպէս). — Կրնանք մտնել:

Հրամանատար. — Առաջ եկէ՛ք:

Կոստաս (անդրով Պերդիկե). — Արիացի՛ր, գնա՛,  
պարտքդ կատարէ:

Փաշտոս. — Ծո՛ւտ ըրէ:

Պերդիկե (ծռեր կը դնէ Հրամանատարին դի-  
մաց). — Ա՛խ, տէր Հրամանատար, ահաւա-  
սիկ ոտքերուդ առջեւ...

Հրամանատար. — Պէ՛րդի՛ն... Ինչո՞ւ այդքան  
վհատած ես... Ինչո՞ւ կը գողդողաս, կը սար-  
սափիս...

Պերդիկե. — Որովհետեւ չհետեւեցայ տուած բա-  
րի խրատներուդ... որովհետեւ ինքզինքս նը-  
ւատացուցի անարժան գործով մը... որով-  
հետեւ կրցայ... ո՞վ Աստուած իմ, սիրտ չեմ  
ըներ խոտովանելու... Բայց այս թափած  
արցունքներս, ամօթէս զգացած սարսուռս՝  
բաւականէն աւելի կարող են յայտնելու ձեզի  
իմ նենգամտութիւնս և ըրածիս վրայ զգա-  
ցած ցաւս. (կու լայ):

Հագարապետ. — Ո՛վ Երկիրք, ինչպիսի՞ր կաս-  
կած մը...

Պէրդիկ. — Ատուլփոս, ո՞վ առաքինի և դա-  
ւաճանուած ընկեր իմ... ո՛հ, կրցա՞յ ու-  
րեմն բանավարութիւնս այն աստիճան կոր-  
սընցընել, որ հետեւեցայ չար կրքի մղման  
մը քեզի դէմ անիրաւելու... Ո՛հ, ի՛նչպէս,  
ի՛նչպէս համարձակիմ հիմայ թողութիւն խըն-  
դրելու քեզմէ... ի՛նչպէս կարելի է...

Ատուլի (վեր վերցրնելով գիւնքը). — Թողութիւն.  
ո՛հ, ի՛նչ կ'ըսես... դուն առանց խորհրդածե-  
լու գործեր ես... Ոտք ելի՛ր, և այս ողջա-  
գուրանքս իբրև գրաւ մ'ընդունէ իմ անխզե-  
լի բարեկամութեանս. (կը գրկախառնէ ին)։

Հրաւանատար. — Ի՛նչպէս... Պէրդի՛նը...

Հարիշրապետ. — Ի՛նքը... Վարժարանիս ա-  
շակերտ մը...

Հագարապետ. — Ազնիւ Մարաջախտին որդի՛ն։

Ալեքսիս. — Ինքն էր, այո՛... այս բարեկամն  
էր... հիմայ հասկըցա՛ք։

Պէրդիկ. — Կը պաղատիմ ձեր գթութենէն՝ դեռ  
աւելի մի կըտըրտըք սիրտս... արդէն չափա-  
զանց իսկ պատռտուած է այն՝ խղճիս դառ-  
նագոյն խայթերով։ Ի՛նչ պատիժ կ'ուզէք՝  
տուէք ինձի. համակամութեամբ կրելու պա-  
տրաստ եմ։ Զգուեցէք ինձմէն, արժանի եմ  
ձեր բոլոր արհամարհանքին։ Վրէժ խնդրե-  
ցէք այն անպատուութեան՝ զոր հասուցի այս  
հոգակաւոր վարժարանիս... Մէկ բան միայն  
կ'աղաչեմ ձեզմէ... ա՛խ, բրածս ծածկեցէք  
հօրէս... (քեպ) Խեղճ հայր իմ... (նկկեկա-  
նօք)։

Կոստաս. — Ո՛հ, հայրդ պիտի չիմանայ. ո՞վ  
կ'ուզես որ երթայ իրեն իմաց տայ... Հոս,  
փա՛նք Աստուծոյ, ամէնքս ալ կրթեալ ան-

ձինք ենք։ — Տէր Հրամանատար, սուտ մի՛  
հանէք զիս... կ'աղաչեմ, այս անգամուան հա-  
մար լռութիւնս պահեցէք։

Փառասոս. — Ամենուն կողմանէ ես ալ կ'աղա-  
չեմ ձեզմէ այս շնորհքը։

Հրաւանատար. — Պատուոյ խօսք կու տամ։

Պէրդիկ. — Շնորհակալ եմ, ո՞վ ազնիւ հոգի-  
ներ. սակէց վերջը ամենախիտս վարքութեա-  
րով, անկեղծ զղջմամբս և մշտատես մեծա-  
բանքներով՝ պիտի քաւեմ՝ ըրած յանցանքս։  
Ա՛խ, երանի՛ թէ կարենայի արիւնս անգամ  
թափելով՝ վերադարձընել այս թշուառ ընկե-  
րիս ինչ որ իմ պատճառաւս կորսընցուց։

Հագարապետ. — Ախիթարուէ ուրեմն. Թագա-  
ւորին գթութիւնը արդէն ամէն բան իրեն  
վերադարձուցեր է։

Պէրդիկ (ուշախուշրեալ). — Ամէ՛ն բան... Ո՛հ,  
ինչպիսի՞ գարհուրելի ճնշող բեռն է մը յանկարծ  
խղճմտանքս թէթեցած կը զգամ։

Կոստաս. — Ես չէի կրնար տարակուսիլ թէ  
այդպէս պիտի ըլլար. և հիմայ ալ, սիրելի  
Ատուլփոս, բոլոր սրտովս ուրախակից եմ  
քեզի։

Փառասոս. — Ինչպիսի՞ մեծ հաճոյք կը զգամ...

Ատուլի. — Շնորհակալ եմ, ազնիւ բարեկամ-  
ներ։

Ալեքսիս. — Իսկ ես՝ որ յատուկ ձեռացազրո-  
վըս՝ ճշմարտութիւնը Թագաւորին ծանուցի՛  
կրկնապատիկ թոշակ ընդունելու արժանացայ։

Կոստաս. — Ապրի՛ս...

Փառասոս. — Կեցցես, բարի Ալեքսիս...

Պէրդիկ (լմանացած). — Ուրեմն Թագաւորն ի-  
մացաւ թէ ո՞վ եղած է պատճառը։

Ալեքսիս. — Ո՛հ, իմացած չէ, որովհետեւ ես  
ալ չէի գիտեր, սամ թէ ոչ...

Հրահանատար. — Սակայն յանձնեց ինձի որ  
գտնեմ... Բայց թէ որ քու դրած առաջա-  
դրութիւնդ հաստատուն է...

Պերդիկն (ընդդիմելով). — Հաստատուն այնքան՝  
որքան ձեր քաջութիւնը. կ'երդնում, Հրահա-  
նատար տէր. և գիտէք որ ձեզմէ կրթուած  
երիտասարդ մը՝ գուր տեղ չի երդնուր:

Հրահանատար. — Լաւ ուրեմն, Թագաւորը  
բան պիտի չլսէ. բան պիտի չլսէ նաեւ հայրդ:  
— Տէր Հագարապետ, տխրութեամբ սրտի  
որդինիդ ձեր ձեռքը կ'աւանդեմ, որովհետեւ  
իրմով ես կը կորսընցընեմ Վարժարանիս մէջ  
օրինակելի աշակերտը: Ամենուն դէմքերը դի-  
տեցէք, և պիտի համոզուիք որ ամէնքն ալ  
իմ զգացմանցս հաղորդակից են: Պարծանք  
համարեցէք այդպիսի որդի մը. ինքը զինուո-  
րականութեան փառք մը պիտի ըլլայ, և պա-  
տիւ այն զօրախմբին՝ որուն մէջ փայլելու  
սահմանուած է: Այս վարժարանիս մէջ ալ  
միշտ պատուով պիտի յիշատակուի Ատուփոս  
Փրիմնէրի անունը, իրեն ցոյց տուած այնքան  
առաքինի ձիրքերուն և գործերուն համար, ի-  
րեն հանճարին և ջանասէր եռանդեան համար,  
բայց ամենէն աւելի իրեն Որդիական-Սիրոյ  
գերազանց օրինակին համար: (Հրահանատա-  
րը յուզմունքով կ'ողջագոչորէ Ատուփոսը, ու-  
մէն աշակերտները չորս կողմը կը ժողովին  
և վարագոյրը կը ծածկէ տեսարանը):

Բ.

## ԱՆԳՆՏԱԿ ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐ

ԶԱԻՆՇՏ ՄԷՆ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ,

ԳՐԵՑ Ա. ՔՈՑՊՈՒԷ

ԹԱՐԳՄԱՆԵՑ Տ. Վ. ԽԱՆՊԷԿԵԱՆ

## ԱՆՁԻՆՔ

Մարգիզ Գուլիէլմ Էսխէնիօլըլը. ազնուա-  
կան.

Պարոն Եւզլին Էսխէնիօլըլը, Մարգիզին  
եղբայրը.

Թալ, սալար հետեակագորուն.

Պրում, սալար հեծելագորուն.

Գրիբս, սեմեկապան Թալի.

Յաւզէր, սեմեկապան Պլումի.

Միքայել, փոնապան.

Տեսարանն է Մարգիզին զգեկին պարտիզին մէջ:



## ԱՐԱՐՈՒԱԾ ՄԻԱԿ

## ՏԵՍԻԼ Ա.

## Պարտեր և Գուշիեր

Պարտե. — Ուրեմն, սիրելի եղբայր, վերջապէս որոշեցիք որ ամարանոցդ և յարակից ընդարձակ կալուածք՝ հոս մեր թոռներէն մէկուն ընծայես, թէ արդեօք կարծիքդ փոխեցիր:

Գուշիեր. — Հաստատ միտքս դրեր եմ, բայց դեռ վճռած չեմ թէ երկուքէն որո՞նն տամ:

Պարտե. — Տարակուսիք լուծուով ինծի շատ դիւրին կը տեսնուի. ստացուածքը մեծ է, կէսը մէկուն տուր, կէսը միւսին, որով երկուքն ալ գոհ կը մնան:

Գուշիեր. — Աստուած չընէ. չե՞ս գիտեր որ անոր համար այս որոշման եկայ, որովհետեւ կ'ուզեմ որ ամարանոցը և յարակից երկիրները անբաժան մնան:

Պարտե. — Լաւ ուրեմն, որոշէ. երկու ամիս է որ մեր թոռները հոս են, կարծեմ զիրենք ճանչնալու համար այսչափը կը բաւէ...

Գուշիեր. — Հետեւակ զինուորաց սալարը շատ աղէկ երիտասարդ մ'է:

Պարտե. — Հեծեալինն ալ նմանապէս:

Գուշիեր. — Պըռւմ շատ զուարթ է:

Պարտե. — Թալն ալ նոյնպէս:

Գուշիեր. — Ո՛հ, ըսելիք չկայ. թալ շատ ազնիւ վարմունք ունի:

Պարտե. — Միւսն ալ հաւասարապէս:

Գուշիեր. — Հեծեալը արդէն շատ հարուստ է:

Պարտե. — Մէկայն ալ աղքատ մէկը չէ:

Գուշիեր. — Ուրեմն ի՞նչ ընենք: Նայէ ըսածիս. ես որոշումը քեզի կը թողում:

Պարտե. — Աստուած չընէ. վասն զի թէ որ յետոյ տհաճութիւններ ունենան՝ յանցանքը վրաս պիտի ձգես, այնպէս չէ:

Գուշիեր. — Կրնայ ըլլալ:

Պարտե. — Թող, թող, ես խառնուիլ չեմ ուզեր:

Գուշիեր. — Ուրեմն ի՞նչպէս ընելու է:

Պարտե. — Մտածելը քեզի կ'իյնայ: Չես կըրնար անոնցմէ մէկը օրոշել, երկուքն ալ զանցըրէ:

Գուշիեր. — Ո՛հ, միտքս բան մ'եկաւ: Այո՛, և որոշողն այդ բանը թող ըլլայ: Երկու թոռներուս ալ ըսէ, իբրեւ թէ գործը քեզմէ կախուած ըլլար, թէ երկուքէն ո՞վ որ մէկալը կարենայ համոզել հոսկէ դուրս ելլելու և երկիրներէս հեռանալու՝ նոյնը ամէն բանի տէր պիտի ըլլայ:

Պարտե. — Խէ՛ւ ես ի՞նչ ես. տէր ըլլալու համար՝ իրարու գլուխ պիտի կոտրեն:

Գուշիեր. — Բայց պայմանաւ՝ որ կռիւ բացողը ամէն իրաւունք պիտի կորսնցնէ. իսկ խորամանկութիւն, համոզելու միջոցներ և խաբէութիւն, այդ ամէնը թող ներելի ըլլան:

Պարտե. — Ատոր ծայրը ի՞նչ կ'ենթադրես:

Գուշիեր. — Մէջերնէն ո՞վ որ աւելի խորամանկ է՝ պիտի կարենայ միջոց մը գտնել՝ միւսը կալուածէս հեռացնելու: Ահաւասիկ իրենք. մրցումը բացուած է. փողահարը նըշանը թող տայ և յաղթողը իւր վարձքն ընդունի. (կը մեկնի):

Պարուն. — Լաւ, լաւ. բայց հետեւանքներուն պատասխանատու չեմ:

### ՏԵՍԻԼ Բ.

Պարուն, Թալ, Պրուս

Թալ. — Ուրեմն մարգիզը դեռ որոշումը չըրան:

Պրուս. — Շնոր ըտէ. երկուքնէս ո՛վ այս սքանչելի ամարանոցին տէր պիտի ըլլայ:

Պարուն. — Պարոններ, ինքը վճռեց որ մէջէն չի կրնար ելլել:

Պրուս. — Ըսել է թէ ոչ մէկուն և ոչ ալ միւսին կ'ուզէ տալ:

Պարուն. — Ո՛չ, ո՛չ, այդ ըսել չէ. այլ կը նշանակէ մանաւանդ թէ երկուքին ալ յօժար է տալու:

Թալ (ժռելով). — Ո՛հ, շատ չնորհակալ ենք:

Պարուն. — Միայն թէ կը փափարքի որ դուք ալ ձեր կողմանէ որոշութիւնը դիւրացնէիք:

Պրուս. — Ի՛նչպէս:

Պարուն. — Երկուքնէդ մէկը հրաժարելով՝ իրաւունքը մէկալին թողուր:

Պրուս. — Բայց այդ կարելի՞ բան է:

Պարուն. — Ի՛նչպէս կարելի ըլլալը՝ ձեզի կ'իյնայ մտածել:

Պրուս. — Երկուքնէս մէկուն մեռնելովը միայն:

Պարուն. — Բացարձակապէս մահը արգիլուած է. իրարու բարեկամ էք. եղբայրս չի ուզեր որ իր պատճառով այդպիսի գեղեցիկ բարեկամութիւն մ'ընդհատի: Ամարանոցը անոր պիտի մնայ՝ ո՛վ որ յաջողի միւսը հեռացնել: Գործածուելիք միջոցներուն եղբայրս բոլորո՞

վին անտարբեր է, բաւ է որ բռնութիւն չըմտնէ. ապա թէ ոչ՝ երկուքնիդ ալ կը գրկուէք:

Պրուս. — Չէ, չէ. այսպիսի գեղեցիկ բանէ ես ամենեւիմ չեմ հրաժարիր:

Թալ. — Ես ալ ամենեւին:

Պարուն. — Խնդիրը քիչ մը ժամանակ հեռանալու վրայ է:

Թալ. — Հասկցանք. բայց ես չեմ երթար:

Պրուս. — Ես ալ չեմ երթար:

Պարուն. — Ըսել է՝ բան մ'ըլլալիք չունի:

Թալ. — Բայց հեռանալ ըսելով ի՛նչ կը հասկըցուի:

Պրուս. — Ես ալ ճիշդ այդ պիտի հարցընէի. ի՛նչ կը հասկընաք:

Պարուն. — Ատիկայ դուք ձեր մէջ պիտի պայմանաւորիք:

Թալ. — Ըստ իս՝ հոսկէ մինչեւ դիմացի գիւղը բաւական հեռաւորութիւն կրնայ ըսուիլ:

Պրուս. — Ինծի համար՝ այս կալուածին սահմանը անցնիլը՝ յաղթուիլ ըսել է:

Պարուն. — Շատ աղէկ. ուրեմն վերջնական ճիշդ որոշման մը գանք: Որինակի համար, կրնայ պայման դրուիլ՝ թէ ձեզմէ ո՛վ որ կարենայ միւսը այս կալուածին սահմանէն դուրս հանել՝ այն ըլլայ յաղթողը. իսկ կալուածին սահմանը արդէն շատ աղէկ գիտէք:

Թալ. — Ինծի համար սքանչելի՞ բան:

Պրուս. — Ինծի դեռ աւելի:

Թալ. — Սակայն մարգիզը թող աչք առնէ՝ դեռ տասը տարի ալ զիս հոս տեսնելու:

Պրուս. — Ես ալ յաւիտեանս հոսկէ մեկնելիք չունիմ:

Պարուն. — Այսքան բաւական է. հիմայ գիտցածնիդ ըրէք. (կը մեկնի):

## ՏԵՍԻՒԼ Գ.

Թայ և Պրշու, Գրիչու և Յազգեր

Թայ. — Եղբայր, այս ինչ ծաղրական վիճակ: Պրշու. — Թէպէտ առաջուան պէս միշտ բարեւ կամ:

Թայ. — Ո՛հ, յայտնի բան է:

Պրշու. — Ուրեմն գէթ այս բարեկամութեան սիրոյն համար պէտք էիր կամովին հրաժարիլ:

Թայ. — Է՛հ, այդ չեղաւ, սիրելի բարեկամ, այդ կարելի չէ:

Պրշու. — Դեռ երէկ չըսիր ինծի թէ քեզի համար ինքզինքս ծովն ալ ձգելու պատրաստ եմ:

Թայ. — Այո՛, ծովն ալ, կրակն ալ. բայց ոչ թէ այս կալուածիս սահմանէն անդին: — Բայց դուն որ ինծմէ շատ աւելի վեհանձն սիրտ մ'ունիս, ի՛նչ կ'ըլլար թէ որ ինծի համար...

Պրշու. — Չէ, չէ, սիրելի բարեկամ, այդ բնաւ ըլլալու բան չէ:

Թայ. — Բայց չէ՞ս յիշեր որ ըսիր ինծի թէ վերջին պատուով ալ հետս բաժնելու յօժար էիր:

Պրշու. — Հացիս վերջին պատանն, այո՛, բայց ոչ այս շքեղ ամբարանոցը:

Թայ. — Տեսնենք ուրեմն թէ ո՞վ պիտի կարենայ աւելի յամառութեամբ մինչեւ վերջը դիմանալ մրցումի ասպարիզին մէջ:

Պրշու. — Մինչեւ որ դրօշս բերդին վրայ չծածանի՛ քայլ մ'ալ տեղի տալիք չունիմ:

Թայ. — Յաղթութիւն կամ պարտութիւն, այս ըլլայ մեր նշանաբանը. (կը մեկնի):

## ՏԵՍԻՒԼ Գ.

Պրշու, Գրիչու, Յազգեր

Պրշու (խօսելով Գրիչուի հետ, որ տիրոջը և տեւեկ կ'երթար). — Գրիբս, վայրկեան մը սպասէ:

Գրիչու. — Հրամայեցէք, տէր:

Պրշու. — Պէտք ես օգնել ինծի տէրդ համոզելու՝ որ հոսկէ հեռանայ:

Գրիչու. — Ի՞նչպէս, ի՞նչպէս, տիրոջս հակառակ դաւադրութեան մը մասնակից պէտք եմ ըլլալ:

Պրշու. — Քաւ լիցի, ստիկայ դաւադրութիւն չէ. խօսքը՝ բարոյական միջոցներով համոզելու վրայ է:

Գրիչու. — Բարոյական միջոցներ. ի՛նչ համեստ խօսք, որ ամէն բան ծածկելու կը ծառայէ:

Պրշու. — Քեզի ծանօթ են տիրոջդ բոլոր գործերն ու վերաբերութիւնները:

Գրիչու. — Ճիշդն ըսելով՝ միայն երեք ամիս է որ քովն եմ. ինքն ալ հազիւ երբեմն բան մը կ'ըսէ, թէպէտ ամէն բան գիտեմ:

Պրշու. — Իբր եղօրորդի՛ ես քեզմէ աւելի պէտք էի գիտնալ. բայց իմ և իրեն ընտանեաց մէջ սեւ կատու մ'անցած ըլլալուն համար՝ շատ ժամանակ է որ յարաբերութիւննիս դադրեր է:

Գրիչու. — Հէ՛, արդէն ամէն բան գիտեմ:

Պրշու. — Հիմակուհիմայ առ այս բարի-ձեռքը:

Գրիչու, Թատր. 6.

Գրիբս. — Թշուառութեանս . ալ ասկէ վերջ հոգևով մարմնով քուկդ եմ:  
 Պրշմ. — Հետս վեր եկուր, կ'ուզեմ ճարտարութիւնդ փորձել:  
 Գրիբս. — Պարծելու համար չէ ըսածս, բայց գիտցիր որ շատ հանճարեղ մէկն եմ:  
 Պրշմ. — Տակէն խող խողալու համար, հէ:  
 Գրիբս. — Այդ չեղաւ. փափաքնիդ միայն կատարելու համար:  
 Պրշմ. — Այո՛, այո՛. հոգ չէ. նոյն բանն է: Առ այժմ՝ մինչեւ որ դառնամ... Յաւզէր, դու հոս իբրեւ լրտես մը կեցիր, ամէն բան լաւ մը դիտէ, վերջէն ինծի կ'իմացընես. (կը մեկնէ Գրիբսի հետ):

ՏԵՍԻՒ Ե.

Յաւզէր միայն

Յաւզէր. — Ամենայն սիրով. լրտեսները կախազան կ'ելլեն, մինչդեռ ես կրնամ յուսալ քանի մը դահեկան ձեռք ձգելու... Հոս ոչ գէշ և ոչ ալ տարօրինակ բան մը կայ. որովհետեւ սրիկաներն երկու խումբի կը վերածուին. մէկը անոնք են՝ որ կը կախուին, միւսն ալ անոնք՝ որ սրիկայութեանց արդիւնքնին կը վայրեն: Չըլլայ թէ ես ալ առջիններէն ըլլամ... Է՛հ, յիմար մտածութիւն . . . Բայց գէթ բան մը ձեռք ձգած ըլլայի. ընկերս դեղին ոսկին գրպանը նետեց. իսկ ես լրտեսի պատուաւոր տիտղոսը ստացայ: Արդէն տէրերը այսպէս կ'ընեն. իրենց ծառաներէն աւելի՛ օտարները կը վարձատրեն:

ՏԵՍԻՒ Զ.

Թալ և Յաւզէր

Թալ. — Սիրելի Յաւզէր, մինակ մնացեր ես:  
 Յաւզէր. — Է՛հ, պարոն, առաքինութիւն ունեցողը մինակ չէ:  
 Թալ. — Ի՞նչ, ի՞նչ... առաքինի՛ ալ ես, հա՛:  
 Յաւզէր. — Սարսափելի՛ առաքինի:  
 Թալ. — Հարկաւ աշխարհիս սովորութեան համեմատ...  
 Յաւզէր. — Ի՞նչ կ'ըտէք. աշխարհիս սովորութիւնը սրն է:  
 Թալ. — Քանի որ սրիկայութեան մէջ շահ չըկայ՝ առաքինի կ'ըլլան:  
 Յաւզէր. — Ներեցէք, տէր, իմ առաքինութիւնս ոտսայնէն ալ բարակ է:  
 Թալ. — Ըսել է թէ շուտով ալ կը փրթի:  
 Յաւզէր. — Այդ ըսել չեմ ուզեր. ըսել կ'ուզեմ որ ինչպէս ոտսայնը թեթեւ շարժումով մ'ալ սարդին կ'իմացընէ որ թշնամին եկեր է. . .  
 Թալ. — Է՛հ, մէկդի ձգէ... շատ բարակը չմանենք . . . Հիմայ ծրագիր մը կը պատրաստէի մտքիս մէջ, բայց...  
 Յաւզէր. — Կրնամ արդեօք հարցընել, տէր իմ, թէ . . .  
 Թալ. — Չէ, չէ. դուն զիս կը ստիպես որ մէկդի թողում այդ ծրագիրս:  
 Յաւզէր. — Մտիկ ըրէք. եթէ ինծմէ ծառայութիւն մը կը սպասէք՝ քաղաքավարութեան պէտք չկայ, ստանց քաշուելու կրնաք ըսել:  
 Թալ. — Քու քարոզած բարոյականդ զիս կը վախցընէ:

- Յաւզդեր. — Եւ ոչ իսկ վրան մտածեցէք... Ծառանները հաւատարիմ են մինչեւ այն պահուն՝ քանի որ այն մէկ բանը հասած չէ:
- Թալ. (ձեռքը դրած դնելով). — Կարծեմ թէ այս է այն մէկ բանն, այնպէս չէ՞:
- Յաւզդեր. — Վայ թշուառութեանս, ինչպէս ալ լաւ հասկըցար:
- Թալ. — Ասկէ վերջ ուրեմն իմ դրօշխ տակ պիտի մտնես:
- Յաւզդեր. — Ձեզի համար պատերազմելու ալ մեռնելու ալ պատրաստ եմ:
- Թալ. — Ըսէ նայիմ, տիրոջդ վրայ տկարութիւններ նկատեր ես:
- Յաւզդեր. — Տկարութիւններ... հազարներով: Աշխարհիս երեսը տէր մը չկայ՝ որ կարենայ մեծ համարմունքի մէջ պահել ինքզինքը սենեկապանի մը աչքին առջեւ:
- Թալ. — Ըսէ ուրեմն, ամենէն աւելի ի՞նչ բանէ կը վախնայ:
- Յաւզդեր. — Փոխադրական հիւանդութիւններէ... Հարիւր թնդանօթներէ միասին պայթած հարուածներ իրեն այնքան վախ չեն պատճառեր՝ որքան այս տեսակ հիւանդութիւնները:

## ՏԵՍԻԼ Է.

### Գրիբու և Առաջինները

- Գրիբու. — Թղթաբերը քիչ մ'առաջ հոսկէ անցաւ. արդէն փողը լսած պիտի ըլլար: Եւ ահա ձեզի համար, տէր, նամակ մը բերաւ:
- Թալ. (կը կարդայ). — Հըմ, տարօրինակ բան: Այս նամակը քեզի ո՞վ տուաւ:

- Գրիբու. — Թղթաբերը բերաւ:
- Թալ. — Մեր գիւղէն նոտար մը կը գրէ՝ թէ մայրս մեռնելու վրայ է եղեր և կ'ուզէ վերջին անգամ զիս տեսնել:
- Գրիբու. — Ափսոս, որքան բարի տիկին մ'է. գիտէք, ես զինքը ճանչցեր եմ:
- Թալ. — Կը գրէ նաեւ որ եթէ իրեն փափաքը կատարել կ'ուզեմ՝ պէտք չէ որ ուշանամ:
- Գրիբու. — Հիմայ շուտ մը կ'երթամ ուրեմն ձիերը կը թամբեմ:
- Թալ. — Բայց դուն գիտես թէ ինչպիսի ծանր պատճառ մը զիս հոս կը բռնէ:
- Գրիբու. — Բայց, տէր իմ, որդիական սէրը... մօրդ փափաքը...
- Թալ. — Շատ լաւ կ'ըսես:
- Գրիբու. — Ինծի այնպէս կու գայ՝ իբր թէ աչքովս կը տեսնեմ այն բարի տիկինը թէ ինչպէս անկողինին մէջ՝ յուզուած՝ «Ախ, զաւակս ո՞ւր է, կը կանչէ, անո՛ւ զաւակս, ի՞նչ կ'ըլլար վերջին անգամ մ'ալ տեսնէի և օրհնութիւնս տայի»:
- Թալ. — Այդ բոլորին ալ ըսելիք չկայ, շատ սրտաշարժ բաներ են. բայց փոքրիկ դժուարութիւն մը կայ:
- Գրիբու. — Ի՞նչ դժուարութիւն:
- Թալ. — Այս է՝ որ մայրս արդէն երկու տարի կ'ընէ՝ որ մեռեր է:
- Գրիբու. — Ի՞նչ, ի՞նչ, իրա՞ն կ'ըսես:
- Թալ. — Այո՛, և կտակին մէջ ալ պատուիրեր է ինծի՝ որ քեզի հարիւր գաւազանի ժառանգութիւն մը տամ:
- Գրիբու. — Ո՛հ, շատ առատաձեռն գտնուեր է:
- Թալ. — Եւ ես պիտի ջանամ անմիջապէս այս վայրկենիս հատուցանել քեզի ժառանգութիւնդ:

- Գրիբու. — Խնդրեմ շատ մի աճապարէք:  
Թալ. — Ալ բաւական է. քեզի՛ պէս անգամ,  
Պրումի հետ խօսքդ մէկ ըրեր ես, հա՛մ:  
Գրիբու. — Ի՛նչ կ'ըսէք, մեծապատիւ տէր. ես  
քնչպէս կրնամ նամակին բովանդակութիւնը  
գիտնալ: Թէ որ անգամ մ'եղած ըլլայի՛ նա-  
մակնիդ բացած կ'ըլլայի:  
Թալ. — Բայց ուզեցիր զիս վտտահացընել՝ թէ  
թղթաբերը բերաւ:  
Գրիբու. — Որովհետեւ զիս ալ Պրումը սալա-  
հովցուցեր էր. ես բարձրատիճան մարդկանց  
միշտ կը հաւատամ:  
Թալ. — Գէշ կ'ընես:  
Գրիբու. — Տէ՛ր Ատուած. քնչպէս կարելի է  
մարդս մաքէն անցընէ թէ...  
Թալ. — Գնա՛, գնա՛, ինչ և իցէ. այս անգամ  
կը ներեմ. բայց թէ որ ուրիշ անգամ ալ  
նոյն սխալմունքի մէջ բռնեմ՝ ոսկրներդ կը  
ջախջախեմ: Յաւզէր, հետո եկուր. (Յաւզերի  
հետ կը մեկնի):

## ՏԵՍԻՒ Ը.

## Գրիբու միայն

- Գրիբու. — Աւա՛ղ, հետը Յաւզէրը տարաւ. հաս-  
կըցայ, ինքն ալ գիտցեր է առիթէն օգտուիլ:  
Ապրիս ընկերս: Մեզի պէս խեղճ մարդկանց  
քիչ մը դրամի ձեռքով ամէն բան ընել կու  
տան: Է՛հ, այսօրուան օրս ոսկին է գործ  
տեսնողը:

## ՏԵՍԻՒ Թ.

## Պրում և Գրիբու

- Պրում. — Ուրեմն ինչ վերջ ունեցաւ:  
Գրիբու. — Փա՛ռք Ատուծոյ, այս անգամ կա-  
շիս ազատել կրցայ:  
Պրում. — Ապուշ, հնարքս չյաշողեցա՛ւ:  
Գրիբու. — Քիչ մնացեր էր որ պիտի յաշողէր,  
բայց փոքր պարագայ մը ամէն բան աւրեց:  
Պրում. — Ի՛նչ կ'ըսես, արդեօք զիրս ճանչցա՛ւ:  
Գրիբու. — Ո՛չ:  
Պրում. — Արդեօք դու այնչափ ապուշ գտնուե-  
ցար՝ որ ինքզինքդ մատնեցիր:  
Գրիբու. — Այդ ալ չէ. իրեն տիկին մայրը պո-  
ռաց թէ երկու տարի է մեռեր եմ:  
Պրում. — Իրա՛ւ կ'ըսես. ինչ ապշութիւն էր ը-  
րածս: Հօրքուրս էր, և ես լսած անգամ չէի  
թէ մեռած է:  
Գրիբու. — Մարդկանց մեծագոյն մասն այդպէս  
են. ապրած ժամանակին օգուտ մը չեն բե-  
րեր, և թէ որ մէկ անգամ իրենց պէտք ու-  
նենաս՝ այն ատեն ալ մեռած կ'ըլլան:  
Պրում. — Փոյթ չէ. ճարտար որսորդը ուրիշ  
հարուած մ'ալ պատրաստ կ'ունենայ:  
Գրիբու. — Ահա տէրս կու գայ. ես կը հեռա-  
նամ:  
Պրում. — Ըտէ նայիմ, փոնսպանը խօսքը պի-  
տի պահէ՛:  
Գրիբու. — Արդէն պէտք եղածները պատրաս-  
տելու գնացեր է. (կը մեկնի):  
Պրում (ետեռէն կ'ըսէ). — Շատ չհեռանաս:

## ՏԵՍԻԼ Ժ.

Պրում, Թայ և Յազգեր՝ որ վիրաւորժի զգեաւ  
 ձագած է, և մէկ աչքը կտոր մը լարով  
 կապած

Թայ. — Սիրելի ընկեր, պէտք է երկուքնիս ալ  
 հեռանանք ասկից և շուտով:

Պրում. — Ինչո՞ւ, ի՞նչ կայ:

Թայ. — Կը յիշէս այն բամպակ տանող կառ-  
 քերը, որոնք քանի մ'օր առաջ այս գիւղէս ան-  
 ցան:

Պրում. — Շատ լաւ կը յիշէմ:

Թայ. — Գիտցիր ուրեմն որ այն բամպակը  
 Չմիւռնիայէն կու գար:

Պրում. — Իմ ի՞նչ փոյթս է:

Թայ. — Գիտես որ այն կառախումբը գիշերը  
 հոս պանդոկն անցուց. իսկ պանդոկապետը  
 որ խարդախին մեծն է, ծածուկ այն բամպակ-  
 կէն գողցեր է. կառախումբն ալ երկրորդ օրը  
 մեկնեցաւ: Գողը հազիւ թէ վաճառքը կը բա-  
 նայ, ինքնիրմէ դուրս ելած՝ ջերմէ կը բռն-  
 նուի և կ'իյնայ: Այս պատուաւոր պարոնը  
 կանչեցին՝ որ մօտակայ քաղաքին վիրաբոյժն  
 է. շուտով հասաւ նա, բայց սարսափեցաւ ու-  
 րեցքներ նշմարելով. կարճ ըսեմ, փոխադրա-  
 կան հիւանդութիւն մը սկսած է:

Պրում (սարսափած). — Փոխադրական հիւան-  
 դութիւն:

Թայ. — Դո՞ւն իսկ ժանտախտն է: Այնպէս չէ՞,  
 պարոն. (Յազգեր գլխով ձաշակոտրիւն կը  
 ցոշցնէ):

Պրում. — Կրողը տանի:

Թայ. — Պանդոկապետն ու կինը արդէն մե-  
 ռան. անոնց որդիքը հոգեվարք են. պանդո-  
 կը կերուխում ընողներն՝ ամէնքն ալ ժանտա-  
 խտէ վարակուած են: Այնպէս չէ՞, պարոն.  
 (Յազգեր գլխի նշանով՝ Այո՛):

Պրում. — Բայց իրաւ որ սարսափելի դժբախ-  
 տութիւն մ'է:

Թայ. — Տունը՝ բեռները կը պատրաստեն: Մար-  
 քիզը ամբողջ ընտանեօք քաղաք իջնելու կը  
 պատրաստուի:

Պրում. — Շատ աղէկ կ'ընէ:

Թայ. — Վիրաբոյժն ալ կ'ըսէ՝ թէ նաեւ օր  
 մ'ալ այս ապակայնեալ օդին մէջ կենալը մեծ  
 անխոհեմութիւն է: Այնպէս չէ՞, պարոն. (Յա-  
 ղեր նշանացի՝ Այո՛). մանաւանդ թէ խոր-  
 հուրդ կու տայ թէ պէտք է արգելարան մը  
 հաստատել:

Պրում. — Անտարակոյս:

Թայ. — Կառքս պատրաստել տուի և ձիս ալ  
 թամբել. որովհետեւ հազար հոգուդ դէմ ելլե-  
 լու քաջութիւնն ունիմ, բայց փոխադրական  
 հիւանդութեան՝ բնաւ:

Պրում. — Կրողը տանի փոխադրական հիւան-  
 դութիւնն ալ:

Թայ. — Կառքիս մէջ հրամէ, սիրելի բարե-  
 կամ, ես ալ ձիովս ետեւէդ կու գամ. բեռե-  
 յիս ալ վերջէն պիտի գան. ժամանակ պէտք  
 չէ կորսնցընել: Այնպէս չէ՞, պարոն. (Յազգեր՝  
 Այո՛): Թէ որ բարեկամական սէրը չըլլար՝  
 այս ժամուս արդէն շատ հեռացած պիտի ըլ-  
 լայի. միայն քեզի համար կեանքս վտանգի  
 մէջ ձգեցի:

Պրում. — Շատ շնորհակալ եմ քու ցոյց տուած  
 սիրոյդ:

Թալ. — Ուրեմն եկ՛ուր՝ քանի որ դեռ ատեն կայ ազատելու:

Պրոշմ. — Ո՛հ, դեռ քիչ մ'ալ կ'ուզեմ սպասել:

Թալ. — Յիմա՛ր ես, ժանտախտի՛ն կ'ուզես ըսպասել:

Պրոշմ. — Բարեկամ, դժբախտաբար արդէն իսկ փոխադրական հիւանդութենէ մը բռնուած ենք, որով մեկնիլ հեռանալնիս անօգուտ պիտի ըլլայ: Բայց Չմիւսնիոյ բամպակը չէ ժանտախտը բերողը, այլ այս գեղեցիկ ամառանոցը: Կրնաս ձիերդ ախոռը քաշել տալ, վասն զի ես տեղէս շարժելիք չունիմ. (կ'երբայ):

### ՏԵՍԻՒ, ԺԱ.

Թալ և Յազգեր

Թալ. — Չյաջողեցա՛ն:

Յազգեր. — Կարծեմ շատ աղէկ կատարեցի դերս, հէ՛:

Թալ. — Ո՛հ, ճիշդն ըսելով շատ դժուար էր:

Յազգեր. — Եւ որքան դժուար. բերանդ գոցէ և գլուխ շարժելով՝ ամէն բանի հաս ըսէ. դըժուար բան չէ՞: Այսօրուան օրս համը դերերը աւելի կը ծափահարուին քան թէ դէմ առ դէմ սրտաչարժ խօսակցութիւնք: Այս ըրածս ալ արուեստին խղթմանակն է:

Թալ. — Գրեթէ՛ գրաւ կրնամ դնել թէ Պլուս գրեզ ճանչցաւ:

Յազգեր. — Չէ՛, ապահով եղիր. ապա թէ ոչ՝ գաւազանները անխնայ կ'իջնէին:

Թալ. — Շուտով մը գնա ական մը պայթեցընելու համար պէտք եղածը պատրաստէ:

Յազգեր. — Բաւ է՝ որ վերջապէս ես ալ միասին օդ չելլեմ. (կ'երբայ):

Թալ. — Մարդս ամենէն աւելի իր մերձաւորը խաբելու համար հնարքներ կը գտնէ:

### ՏԵՍԻՒ, ԺԲ.

Միքայել և Թալ

Միքայել (ձեռքիւ մէջ ունեցած դրամները դիտելով). — Ինչ գեղեցիկ ոսկիներ: Եւ սակայն շատ տարօրինակ մէկն է այն պարտնը... Այս ոսկիներով փառաւոր հրախաղութիւն մը կարելի էր պատրաստել, բայց ո՛չ, ընդհակառակն հրդեհ մը ուզեց...

Թալ (դիպրոշածով դեպ ի խորը դառնալով). — Ի՞նչ բան է. կրակ...

Միքայել. — Ե՛հ, բան մը չէ, բան մը չէ. երեսի վրայ ձգուած փուռ մ'է որ կ'այրի:

Թալ. — Ուսկից գիտես. հրդեհը հեռուն է:

Միքայել. — Ասկէ մէկ մղոն հեռու:

Թալ. — Հոնկէ՞ կու գաս:

Միքայել. — Ես ինքս կրակը տուի:

Թալ. — Դո՛ւն տուիր. ինչո՞ւ համար:

Միքայել. — Այո՛, ես. վասն զի իմս էր. ես փրկնապան մ'եմ, և փուռս հրդեհելու համար՝ ձեռքս աղէկ եղտտեցին. տեսէք, ես ասով այնպէս երէք հատ կրնամ շինել:

Թալ. — Բայց ո՞վ քեզի դրամ տուաւ՝ որ փուռը այրես:

Միքայել. — Անունը բնաւ մէկուն չեմ կրնար ըսել:

Թալ (տարը քաշելով). — Շո՛ւտ, անպիտան, կամ ըսէ, կամ փորդ կը խոթեմ:



Միքայել. — Որովհետեւ այդչափ ազնուաբար  
կը փափաքիս, կ'ըսեմ ուրեմն որ ձիաւոր զօ-  
րաց սալարը պատուիրեց ինծի, քու բարե-  
կամդ:

Թալ. — Ինչո՞ւ համար:

Միքայել. — Ի՞նչ գիտնամ. կրնայ ըլլալ որ  
հրդեհ տեսնելով կը գուարճանայ:

Թալ. — Հասկցայ, հասկցայ, լուռ կեցիր. ին-  
ծի այս միայն բռն թէ այդ փուռը այս գիւ-  
ղէս դճւրս կ'իյնայ:

Միքայել. — Հարկաւ:

Թալ. — Ալ գնա. այսչափը ինծի կը բաւէ:

Միքայել. — Եթէ դուք ալ, տէր իմ, կը փա-  
փաքիք փուռերու հրդեհներ տեսնել, դեռ աս-  
դիս անդին այրուելէք փուռեր ունիմ:

Թալ. — Սալարը կու գայ, գնա:

Միքայել. — Հարբւր ոսկիով ամէնն ալ կ'այ-  
րեմ. (կ'երթայ):

## ՏԵՍԻՒ ԺԳ.

Պրում և Թալ

Պրում (բատրոնէն դուրս). — Շուտ, ձիս թամ-  
բէ, մօտիկ գիւղէն մարդիկ օգնութեան կան-  
չէ, հրդեհի զանգակներն ալ զարնել տո՛ւր:

Թալ (ինքնիրեն). — Բան չգիտցող պիտի ձեւա-  
նամ: — (Բարձր) Բարեկամ, ի՞նչ կայ:

Պրում. — Տէ՛ր Ատուած, այն սարսափելի կը-  
րակը չէ՞ս տեսներ:

Թալ. — Ո՛հ, իրաւ որ սարսափելի:

Պրում. — Կարծես ամբողջ գիւղ մ'է որ կ'այրի:

Թալ. — Օգնութեան պէտք է հասնիլ:

Պրում. — Արդէն ատոր համար ձիս թամբել  
տուի. դուն ալ ուրեմն շուտ ըրէ՛, պատրաս-  
տուէ՛:

Թալ. — Ի հարկէ. լրագիրները կ'ըսեն թէ կը-  
րակի ատեն զինուորականք հրաշք կը գործեն:

Պրում. — Մենք ալ այնպէս պէտք է ընենք:

Թալ. — Եթէ լրագիրներն ալ չըսէին, բայց  
եղբայրսիրութիւնն արդէն կը պահանջէր:

Պրում. — Հարկաւ եղբայրսիրութիւնն ալ . . .  
բայց շուտ ըրէ՛:

Թալ. — Որչափ անուշ բան է՛ նեղութեան մէջ  
եղողներուն օգնել:

Պրում. — Իրաւ որ երկնային քաղցրութիւն  
մ'ունենալու է:

Թալ. — Բոցերէն խեղճ տղայ մը ազատել . . .

Պրում. — Եւ յուսահատած մօրը յանձնել . . .

Թալ. — Անոր հագարումէկ շնորհակալութիւն-  
ները լսել . . .

Պրում. — Այ՛ո՛. բայց թէ որ դանդաղիս շար-  
ժեղու՛ կրնան անոնցմէ քանի մը տասնեակ-  
ներ այրիլ:

Թալ. — Առջեւ ինկիր, ետեւէդ շուտով կը հաս-  
նիմ:

Պրում. — Ո՛հ, ոչ, փառքը միասին կ'ուզեմ  
բաժնել:

Թալ. — Ո՛հ, սիրելի բարեկամ, փառքիդ նա-  
խանձող չեմ:

Պրում. — Բայց չեմ կրնար հասկընալ թէ ինչ-  
պէս կարելի է քեզի պէս կարեկցող սիրտ մը  
այդքան դանդաղի:

Թալ. — Կ'ուզես ճիշտը խոստովանիմ, սիրելի  
պաշտօնակից. իրաւցնէ՛ քեզի սրտանց կը կա-  
րեկցիմ. մտխած դրամներուդ կը մեղքընամ.  
բայց թէ որ գաւառիս ամբողջ փուռերն ալ  
այրել տալու ըլլա՛ս՝ ես դարձեալ տեղէս չեմ  
շարժիր. հա՛, հա՛, հա՛. (կ'երթայ խնուարով):

Պրում. — Խայտառակ բան. մազը ծակուեր է.  
բայց ասով պէտք չէ վհատիմ, ոչ. մանաւանդ  
թէ նոր հնարք մը մտածելու եմ:

### ՏԵՍԻԼ ԺԳ.

Գոշիեղև և Պրում

Գոշիեղև. — Բարի իրիկուն, սալար. Բնչպէս,  
մինակ մնացեր ես:

Պրում. — Սիրելի քեռիս, մինակ չեմ, քանի  
որ ուր ալ երթամ՝ ամարանոցիդ տիրանա-  
լու մտածութիւնը հետս կը պտըտի:

Գոշիեղև. — Անիկայ ալ իմս չէ, քանի որ ու  
րոշուեցաւ յաղթողին տրուելու:

Պրում. — Երնէկ անոր՝ որ վերջապէս կարե-  
նայ յաղթեցի՛ կանչել. երկուքնիս ալ այնչափ  
զգուշաւոր ենք՝ որ այս ընթացքով գործը բա-  
ւական երկայն պիտի երթայ:

Գոշիեղև. — Կ'ուզէ տարի մ'ալ տեսէ, ես համ-  
բերութեամբ պիտի սպասեմ:

### ՏԵՍԻԼ ԺԵ.

Յաւզեր՝ շնչաւարա՛ւ առանց Գոշիեղևի տեսնե-  
լու, որ խորը քաշուած պիտի ըլլայ, և  
վերինները

Յաւզեր. — Ո՛վ տէր իմ, վրաս ոյժ չմնաց, մե-  
ռածի՛ պէս եմ:

Պրում. — Աւելի աղէկ:

Յաւզեր. — Բայց երկայն չի քշեր՝ դուն ալ ին-  
ծի պէս պիտի ըլլաս:

Պրում. — Ի՛նչ, ժանտախտը արդեօք նորէն պի-  
տի սկսի:

Յաւզեր. — Չէ, այլ մարքիզը՝ քու քեռիդ՝ միտ-  
քը փոխեր է:

Պրում. — Ի՛նչ, Բնչ, ինչ կ'ըսես:

Յաւզեր. — Սալարը զինքը համոզեց՝ որ ամա-  
րանոցը իրեն տայ, հիմայ ալ միասին նստա-  
րին կ'երթան՝ որ դաշնագիրը գրել տան:

Պրում. — ձե՛ն ա կ'ըսես:

Յաւզեր. — Շո՛ւա, ձի հեծիր ու վազցուր՝ եւ  
տեսնէն հասիր, կրնայ ըլլալ որ նորէն կարծի-  
քը փոխել տաս:

Պրում. — Բայց դու ինքդ զիրենք տեսո՞ր:

Յաւզեր. — Երկու աչքերովս. լրտեսութիւնը  
ինծի յանձնելէվ վերջը՝ ամէն բանի ուշադիր  
եմ: Մարքիզը պարտէզը կը քալէր, հետն ալ  
սալարը կ'ընկերանար՝ սաստիկ թախանձներ  
ընելով՝ ինդիրն յաջողընելու համար: Վեր-  
ջապէս քեռիդ ըսաւ. «Լա՛ւ, ուրեմն ամարա-  
նոցը քուկդ է»: Չիերը լծել կու տան, կառք  
կը նստին միասին, և թռչելու պէս վազընել  
կու տան:

Պրում. — Բայց դուն ուրեմն այդ ամէնը պաղ  
արեամբ գիտեցիր:

Յաւզեր. — Ի՛նչ կրնայի ընել: Պոռացի. «Տէր  
իմ, այս ըրածնիդ ընելու բան չէ»: Ուզեցի  
ձիերը բռնել՝ ատրճանակը այնպէս դէպ ինծի  
ուղղեց՝ որ պատկառանքը մինչև ոսկրներս  
թափանցեց: Բայց Աստուծո՛յ սիրոյն, շուտ  
ըրէ, վայրկեան մ'ալ կորսընցնելու չի գար:

Պրում. — Բայց կարելի՞ բան է:

Յաւզեր. — Շա՛տ կարելի. խօսքը մէջերնիս մը-  
նայ, քեզի դէմ եղածը դաւաճանութիւն մ'է:

Պրշմ (Գռչիկերմի դառնարով). — ձիւնդ է, մե-  
ծապատիւ մարքիզ:

Գռչիկերմ, — Ո՞վ, ո՞վ կ'ըսէ. Յաւզէ՛րը: Ուրեմն  
նօտարին գնացին դաշնագրերը պատրաստե-  
լու, հա՛մ:

Յաւզեր (ապշած մնարով). — Ի՛նչպէս կարելի  
է... հա՛, հա՛... հիմայ ճիշդը կը յիշեմ. սա-  
լարը կ'ուզէր մարքիզը նօտարին տանիւ, բայց  
նա չգնաց:

Գռչիկերմ. — Ստուգիւ, այն աստիճան նեղուեր  
եմ այդ քու ըսած վէճէդ, որ թալի հետ բը-  
նաւ տեղի ունեցած չէ, մինչեւ հարկ կը զգամ  
երթալ հանգչելու: Հա՛, հա՛, հա՛... ոչ թէ  
տիրոջդ, այլ հիմայ քեզի դէմ դաւաճանու-  
թիւն մ'ըրի. (կը մեկնի):

ՏԵՍԻԼ ԺԶ.

Պրշմ և Յաւզեր

Պրշմ. — Այսպէս ուրեմն, Յաւզէր, ձին ինչո՞ւ  
դեռ չթամբեցիր:

Յաւզեր. — Փա՛ռք տանք Աստուծոյ, գործին  
բարեյաջող ելքին համար:

Պրշմ. — Անպիտան սրիկայ. առ նուազն հա-  
րիւր գաւազանի արժանի ես:

Յաւզեր. — Ո՛չ, ո՛չ, աշխատութեանս վարձք  
չեմ ուզեր:

Պրշմ (սպառնարով). — Եւ սակայն ես չեմ  
ուզեր քեզի պարտական մնալ:

Յաւզեր. — Տէ՛ր իմ, թող սրտերնիդ ինձմէ չը-  
ցաւի. այսպէս կ'ըլլայ անաւատիկ, քանի որ  
դուք օտար խաբէբաներու կը դիմէք՝ ձերին-

ները թողած: Գրիբս մէկ ոսկիով ինքզինքը  
ձեզի ծախեց. ես ալ շատ ցաւեցայ որ դուք  
իմ ճարտարութեանս չվստահացար: Արդէն  
գիտէք որ պատիւս ամէն բանէ վեր կը դը-  
նեմ. հետեւաբար ձեր անվստահութիւնը զիս  
զրգոցեց՝ ձեզի ցոյց տալու թէ իմ ձեռքէս ալ  
բան կու գայ:

Պրշմ (իւրեքիտեմ). — Իրաւունքի պէս բան  
մ'ունի: — (Բարձր) Ի՛նչ որ է, այս անգամ  
կը ներեմ քեզի. գնա հանդիպածը սալարին  
պատմէ և ըսէ որ ամենակարեւոր բանի մը  
համար շուտով հետը խօսիլ կ'ուզեմ:

Յաւզեր. — Պատրաստ եմ տէր: (Իւրեքիտեմ)  
կարծեմ ուրիշ վարպետութիւն մը մտածած  
պիտի ըլլայ. (կ'երթայ):

Պրշմ (գրպակէն շաց նաւակ մը նսնկարով). —  
Վերջին նետս ալ կապարճէն հանեմ. թէ որ  
այս ալ չյաջողի՛ ընթերելու պիտի երթամ.  
միտքս դատարկուեցաւ և հոգիս բերանս եկաւ.  
ոյժ առնելու պէտք ունիմ: Գրիբս, ո՛ւր ես:

ՏԵՍԻԼ ԺԷ.

Պրշմ և Գրիբս

Գրիբս. — Անդին ծառին ետեւը կծկուած կե-  
ցեր էի, իմ մորթիս տակ ծածկուած:

Պրշմ. — Դեռ ընելիք ճարտար գործ մ'ալ ու-  
նիս. իմ կերպարանքս առնելով՝ դուն զիս պի-  
տի ներկայացնես:

Գրիբս. — Չափազանց պատիւ:

Պրշմ. — Գիտեմ, բայց ձեռնարկիս մէջ յաջո-  
ղելու համար է՛ որ այդ պատիւը քեզի կը  
չնորհեմ:

- Գրիբու. — Այո՛, եթէ գաւաթ մը օղի կոնծելու պէս բան մ'ըլլար...
- Պրում. — Հասակնիս հաւատար է. գնա սեւեակս, վերարկուս հագիր, սաղաւարտս ալ գլուխդ դիր, մինչեւ աչքերդ քաշէ. վերարկուով ալ երեսդ ծածկէ ու հոս դարձիր:
- Գրիբու. — Բողոր ընելիքս ա՛յդ է:
- Պրում. — Կառքը պատրաստել կու տամ, սալարը պիտի գայ և միասին պիտի նստիք:
- Գրիբու. — Մէջը:
- Պրում. — Այո՛, այո՛, մէջը:
- Գրիբու. — Ո՛հ, տէր, կառքին ետեւը նստելու այնչափ վարժեր եմ՝ որ վախեմ թէ...
- Պրում. — Է՛հ, յիմար. այսօրուան օրս ո՛րքան մարդիկ կան՝ որոնք ժամանակաւ կառքի ետեւը կը նստէին, իսկ հիմայ մէջը կը նըստին. դուն ալ անոնց պէս ըրէ:
- Գրիբու. — Բայց թէ որ հետս սկսի խօսիլ:
- Պրում. — Երեսդ դարձուցած՝ հծծիւնով մը կը պատասխանես:
- Գրիբու. — Բայց ի՞նչ նպատակաւ պիտի գործուի այս ամէնը:
- Պրում. — Կառապանը խրատած եմ, զձեզ գիւղէն դուրս պիտի հանէ. անկէ վերջը կրնաս ինքզինքդ յայտնել:
- Գրիբու. — Այո՛, կաշիս հանելու համար, հէ՛:
- Պրում. — Եթէ այդպէս բան մ'ըլլայ՝ գքեզ իմ ծառայութեանս մէջ կ'առնեմ:
- Գրիբու. — Շատ շնորհակալ եմ. բայց այնպէս բան մ'է ասիկայ՝ ուսկից ողջ ազատիլը մեծ հրաշք մը պիտի ըլլայ:
- Պրում. — Շատ շատ՝ քանի մը գաւազան պիտի ուտես, ուրիշ բան չէ:
- Գրիբու. — Իրաւ կ'ըսեմ, շատ հրապուրիշ ծրագիր մը չէ...

- Պրում. — Քսակէս քեզի հասնելիքը աւելի հրապուրիչ չէ՞. ամէն գաւազան քեզի ոսկի մը պիտի շահեցնէ:
- Գրիբու. — Յանկարծ թէ որ հարուածներուն տակ հաշիւը շիտթեմ և աւելի համբեմ...
- Պրում. — Այո՛, նոյնպէս այն ատեն ալ. հիմայ զո՛հ ես:
- Գրիբու. — Թէ այդպէս է՝ կ'երթամ. արդէն աշխարհք վայլողները՝ աշխարհիս հետ պարողներն են:
- Պրում. — Բայց շուտ ըրէ...
- Գրիբու. — Ատնօք մոգ մը գուշակեց՝ թէ օր մը սպայ պիտի ըլլայի. հիմայ կ'ըմբռնեմ թէ իր արուեստին լաւ տեղեակ էր. (կը մեկնի):
- Պրում. — Սպան կու գայ. պատրաստուի՞րդ դերերնիս լաւ խաղալու:

## ՏԵՍԻԼ ԺԸ.

Պրում և Թալ

- Թալ. — Բարեկամ, ճիշդ է որ զիս կանչեր ես:
- Պրում. — Այո՛, ընկերակիցդ իմ, քեզի ըսելիք մ'ունիմ: Կը տեսնես որ վարպետութեամբ շատ դժուար է թէ մեզմէ մէկը կարենայ միւսը խաբել:
- Թալ. — Ո՛հ, բայց պէտք չէ յուսահատիւք:
- Պրում. — Ատով ըսել չեմ ուզեր որ վարպետութիւն բանեցնելէն յոգնած եմ, այլ ըսել կ'ուզեմ որ քեզի շատ նպատաւոր պարագայ մը մէջտեղ ելաւ:
- Թալ. — Ըսէ նայիւք:
- Պրում. — Ուրիշ անգամ արդէն քեզի խօսեր

եմ ամենահարուստ հօրեղբօրս մասին, որ  
բարձրատիրճան դիրք մը գրաւեր էր...

Թալ. — Հա, կը յիշեմ, կ'ըսէիր որ հարուստ  
գորավար մ'է, և նշաններու մէջ խղզուած...

Պրու. — Աւելցուր նաեւ թէ միլիոնատէր մ'է  
ըսի: Արդ, գիտցիր որ ծերը մեռնելու մօտ  
հասած ըլլալով՝ զիս իրեն բոլոր հարստու-  
թեան ժառանգ կ'անուանէ:

Թալ. — Որո՞ւ կ'ուզես կլլեցնել:

Պրու. — Ճիշդ կ'ըսեմ, կատակ չէ: Կարգա՛  
այս տոմսակը, զոր հիմայ ընդունեցայ: Իրեն  
մտերիմներէն մէկը կ'իմացընէ ինծի թէ հօր-  
եղբայրս հիւանդ է, և թէ զիս ժառանգ ըրեր  
է իրեն ունեցածներուն, և կ'ուզէ զիս մէջմը  
տեսնել, և թէ պէտք է որ շուտ երթամ՝ նոյն  
իսկ ժառանգութեան վերաբերեալ դժուարու-  
թիւնները հարթելու համար. վերջապէս չորս  
աչքով ինծի կը սպասէ:

Թալ. — Ճիշդ է, հոս ալ այդպէս գրուած է.  
(կտակիր ետ դարձրելով):

Պրու. — Իսկ դուն ի՞նչ խորհուրդ կու տաս:

Թալ. — Փափաքս դիւրաւ կրնաս գուշակել:

Պրու. — Ես իմ խորհրդածութիւններս ըրի.  
հօրեղբօրս ձգելիք ժառանգութիւնը այս ամա-  
րանոցէն ութը կամ տասն անգամ աւելի կ'ար-  
ժէ. բաց ասկէ, ասիկայ ձեռք ձգելը բախտէն  
կախումն ունի, մինչդեռ միւսը ապահով է:

Թալ. — Ատկէ աւելի ինչացի տրամաբանու-  
թիւն չի կրնար ըլլալ:

Պրու. — Ատկէ գատ՝ նաեւ մէջերնիս եղած  
բարեկամութիւնը...

Թալ. — Չափազանց ազնիւ եք:

Պրու. — Կասկածո՞տ, չէ՞ս հաւատար, ինչո՞ւ  
կը ինտաս. կը կարծես որ ըսածս առասպել  
մ'է. բայց տես, ահա կառքս պատրաստ է և  
պիտի մեկնիմ:

Թալ. — Քանի որ այդպէս է, ընկերս, բոլոր  
տրտանց՝ քեզ բարի ճանապարհ կը մաղթեմ.  
բայց ներէ որ չհաւատամ՝ մինչեւ մեկնիլդ  
աչքովս չտեսնեմ:

Պրու. — Որպէս զի համոզուիս և վստահ ըլ-  
լաս՝ մինչեւ կալուածիս սահմանագլուխը հետս  
եկուր. այն ատեն ալ տարակոյս չես ունենար  
առաջադրութեանս հաստատութեան վրայ:  
Հօրեղբայրս կորսնցընելու համար զգացած  
վիշտս՝ սիրտս կը ճնշէ: Գուլիէլմ՝ մարքիզին  
ալ մնաս բարով ըսելու կամք չունիմ. ինք-  
զինքս շուտով մը կառքը պիտի ձգեմ և մին-  
չեւ որ նպատակիս չհասնիմ՝ դուրս պիտի  
չելլեմ:

Թալ. — Շատ աղէկ, մինչեւ սահմանը հետդ  
կու գամ:

Պրու. — Բայց՝ զիտնաս որ խօսակցութիւն ը-  
նելու սիրտ չունիմ, և վերարկուիս մէջ պըլ-  
լուած՝ ըսելիքներուդ պատասխանելու համար՝  
չատ շատ քանի մը բառ մտնում:

Թալ. — Ուզածիդ պէս ըլլայ, բայց թէ որ հետդ  
գալս կ'ուզես՝ այս պայմանն ալ պէտք ես  
ընդունիլ:

Պրու. — Ի՞նչ պայման:

Թալ. — Երբոր գիւղին սահմանները հասնինք՝  
ուր այս ամարանոցիս յարակից երկիրները  
կը լմընան, երկուքնիս ալ պէտք է իջնենք  
կառքէն, և նախ դուն ինծմէ առաջ պիտի  
անցնիս սահմանը, յետոյ նորէն կառք կը նըս-  
տինք և ճամբանիս կը շարունակենք:

Պրու. — Ո՞հ, դեռ կասկածներէ ազատ չես,  
այո՛, այո՛, այդ ալ կը խոստանամ:

Թալ. — Ուրեմն երթանք:

Պրու. — Երթամ՝ վերարկուս առնեմ և շուտ մը  
կը դառնամ. (կ'երրայ):

- Թալ. — Արդեօք ըսածը ճիշդ է:  
 Պրոշմ (կը դառնայ). — Քիչ մնաց բան մը պիտի մոռնայի. իմ կողմանէս Գուլիէլմ մարգրիկին ներողամտութիւնը խնդրէիր:  
 Թալ. — Այդ կը հասկցուի:  
 Պրոշմ. — Եւ նաեւ իր եղբօրը Եւգինիոս Պարոնիին ալ:  
 Թալ. — Բնաւ հոգ մի՛ ըներ, ըսածներդ կը կատարեմ:  
 Պրոշմ. — Հիմայ շուտով կը դառնամ. (կը մեկնի):  
 Թալ. — Հըմ. այսպէս յանկարծական որոշման մը տակը խարդախութիւն մը ծածկուած է, կը կասկածիմ: Յազէր, հոս եկուր. խօսակցութիւննիս լսեցիր:

### ՏԵՍԻՒ, ԺԹ.

Թալ և Յազէր

- Յազէր. — Վանկ մ'անգամ չփայտցուցի:  
 Թալ. — Ըսածները ճիշդ կը կարծես:  
 Յազէր. — Շիտակն ըսելով՝ այնպիսի անկեղծ կերպով մը կը գուրցէր որ...  
 Թալ. — Ճիշդ է որ այսօր նամակ առեր է:  
 Յազէր. — Չեմ գիտեր:  
 Թալ. — Պայուսակներ պատրաստեցիր դուն:  
 Յազէր. — Ես բան պատրաստած չեմ:  
 Թալ. — Ըսել է ամենեւին ճամբորդութեան պատրաստութիւն մը տեղի ունեցած չէ:  
 Յազէր. — Եւ ոչ իսկ շուքը:  
 Թալ. — Ասիկայ աչքս կը վախցընէ. անտարակոյս նոր դարան մ'է. բայց բան մը չէ, աչ-

- քերս չորս կը բանամ: — Սիրելի Յազէր, քու ալ քաջութիւնդ ցուցնելու ժամանակը հասաւ:  
 Յազէր. — Տէր իմ, ցուցամուտութիւն ամենեւին չեմ ունեցած:  
 Թալ. — Շուտով սենեակս գնա. վերարկուիս մէջ պըլլուէ, ճամբորդութեան գլխարկս ալ գլուխըդ դիր ու հոս դարձիր. տէրդ գալուն պէս՝ հետը կառք կը նստիս ու կ'երթաս:  
 Յազէր. — Բայց զէթ կ'անակս հետս չտանէի:  
 Թալ. — Ո՛հ, թէ որ պէտք ըլլայ՝ ոտքերդ կըրնաս գործածել:  
 Յազէր. — Ճիշդ է թէ գորաւոր են. բայց թէ որ յանկարծ տէրս իր ծառայութենէն զիս հանէ՝ քովերնիդ կ'առնէք:  
 Թալ. — Պատուիս վրայ խօսք կու տամ այդպէս ընելու. (Յազէր կ'երրայ): Ինչ ալ ըլլայ՝ ես իմ ընելիքս որոշեր եմ: Եթէ ստոյգ է՝ որ ինքն իր ուզելով ինձի կը թողու ասպարէզը՝ ըսելիք չունիմ. ապա թէ ոչ՝ արդէն ատրճանակներս վառօդով լեցուն են: Ահաւասիկ ինքը կու գայ. կը պահուըտիմ. յուսամ որ ներկայացուցիչս շատ սպասեցնել չի տար. (տակն կրաւ ծառերուն ետեւը կը պահուըտի):

### ՏԵՍԻՒ, Ի.

Գրիբս՝ երկչոտ՝ Պրոշմի գլխարկով, և Թալ

- Գրիբս (խեղճիւրեմ). — Աւա՛ղ, կ'ուզէի որ արդէն շատոնց լիցցած ըլլար:  
 Թալ (խեղճիւրեմ). — Իր այդ զգուշաւոր քալուածքը ինձի կասկած կու տայ:

Գրիբու (իևքևիբու). — Գէթ ապահով ըլլայի  
թէ տէրս դիմակ դնելու իրաւունքը կը յար-  
գէ... այն ատեն համբերութիւն... բայց վա-  
խեմ որ...

Թալ (իևքևիբու). — Ի՞նչ բանի համար մինչեւ  
քիթն ու բերանը այդպէս պատատուեր է:

Գրիբու (դոդոդոդով՝ քրիկ տակիկ կ'երգէ):

Թալ (իևքևիբու). — Ա՛ս աղուոր, երգել ալ սկը-  
տաւ. ի՞նչ տարօրինակ բան:

Գրիբու (իևքևիբու). — Գրեթէ կը կորսնցընեմ  
քաջութիւնս. թէ որ գործը քիչ մ'ալ երկըն-  
նայ՝ մնա՛ս բարով քաջութիւն. ոտքերս առած  
կը փախչիմ:

Թալ (իևքևիբու). — Օրհնած Յաւգէրն ալ դեռ չի  
երեւնար:

Գրիբու (իևքևիբու). — Թշուառութեանս, ահա-  
ւասիկ տէրս: (Ար դիտէ Յաւգէրը և վայելուչ  
կերպով կը բարեւէ):

### ՏԵՍԻԼ ԻԱ.

Յաւգէր՝ Թալի ձաւորայրորեան գլխարկով և  
վերարկուով և վերիկները

Յաւգէր (վախնայով՝ ձեռքը վերարկուի տակիկ  
կը հանէ և Գրիբուի կ'երկընքէ). — Հըմ, հըմ:

Գրիբու (կը սերմէ և կը մտնայ). — Հըմ, հըմ:  
Յաւգէր (մեկնելու նշան կ'ընէ). — Հըմ, հըմ:  
(Քաղաքավարորդիներ կ'ընեն րէ ո՛վ առաջ  
սխտի ելլէ. վերջապէս մէկը կ'երկէ, միւսն  
ալ ետեւէ):

Թալ (առաջ գալով): — Լաւ է, ամենալաւ. է՛ն

կառք ալ մտան. սքանչելի՛ բան: Յառա՛ջ ու-  
րեմն, կառապան: Կառքը սկսաւ երթալ. ի՞նչ  
փառաւոր կը վագէ. անկիւնը դարձան. տա-  
սը վայրկեանէն գիւղէն դուրս կ'ըլլեն, և այս  
հիանալի ամարանոցն ալ իմս կ'ըլլայ: Ամե-  
նեւին ձայն-ձուռն չկայ. բան չի լսուիր... ու-  
րախութիւն, հեռացան գնացին:

### ՏԵՍԻԼ ԻԲ.

Պրում և Թալ

Պրում (իևքևիբու, առակ մեկալը տեսնելու). —  
Մեկնեցան. վերջապէս կրցայ թակարդը ձը-  
գել. եթէ անդրադառնայ ալ՝ կառքէն չի կըր-  
նար իջնել. կառավարը այնպիսի բարի-ձեռք  
մ'առաւ՝ որ ոչ սպառնալիք և ոչ ալ աղա-  
չանք պաղատանք՝ բանի չեն գար. սահմանը  
չանցած՝ պիտի չկենայ:

Թալ (իևքևիբու). — Հիմայ ամարանոցն իմս է:  
Պրում (իևքևիբու). — Հիմայ Գուլիէլմ՝ մաքրի-  
զին կ'երթամ: — (Երկուքն ալ ետ դառնա-  
լով՝ իրարու կը հանդիպին և կ'ապշիկ) Ա՛ն,  
ի՞նչպէս, դու հո՞ս ես, բարեկամ:

Թալ. — Կը կարծէի թէ սիրելի պաշտօնակիցս  
արդէն հօրեղբօրը ճոխ ստացուածները ժա-  
ռանգելու գնացած պիտի ըլլայ:

Պրում. — Բայց դուն ալ ընկերելու խօսք տուած  
չէիր:

Թալ. — Այո, թէ որ ազնիւ բարեկամս զիս  
խաբելու միտք չունենար:

Պրում. — Երկու կողմէն ալ կարելի եղածին  
չափ աշխատուեր է. բայց, բարեկամ, դուք  
չատ խորամանկ էք:

Թալ. — Բայց ո՞վ էր ուրեմն սպասալարի մը ներկայացուցիչը:

Պրշմ. — Քու ծառայող Գրիբս:

Թալ. — Վ՛այ անպիտան:

Պրշմ. — Իսկ քո՛ւկդ:

Թալ. — Այն ալ Յաւզէր՝ քու ծառայող:

Պրշմ. — Անճոռնի՛ն:

Թալ. — Ուրեմն ըսել է՝ հիմայ անոնք կառքով հանգիստ ճամբորդութիւն մը կ'ընեն:

Պրշմ. — Եւ ի՛նչպէս մէկը միւսէն կը վախէ: Մե՛ղք որ այս գեղեցիկ տեսարանը չենք կըրնար վայելել:

Թալ. — Բայց, բարեկամ, այս ըրած կատակնիդ պատշաճութեան չափը անցուց (գալլրաւնայոյ):

Պրշմ. — Ո՛հ, ո՛հ . . . Աքիլլէսի պէս կատղած կ'երեւաս:

Թալ. — Կարճ ըսեմ, ըրածդ ինծի դէմ ծանր նախատինք մ'է:

Պրշմ. — Ի՛նչպէս:

Թալ. — Իմ ծառայովս կը զեղծանիս՝ զիս խաբել ուզելու համար:

Պրշմ. — Նոյն բանը դուն ալ ինծի չըրիր:

Թալ. — Դուն համարձակեր ես՝ իրեն զօրավարի զգեստ հագցընել:

Պրշմ. — Դուն պակաս ըրիր:

Թալ. — Ես խորամանկութիւնդ օղը հանելու համար ըրի. մինչդեռ դու բոլոր զինուորական կարգը և յատկապէս զիս նախատեսիր:

Պրշմ. — Է՛հ, բաւական է, խենթըցա՛ր ինչ եղար:

Թալ. — Դուն զիս ծառայիս դիմաց խայտառակուելու վտանգի ենթարկեցիր:

Պրշմ. — Ինքը քեզի ընկերակցելու միայն հրաման ընդունեք էր՝ ուրիշ ոչինչ:

Թալ. — Ի՛նչ խայտառակութիւն պիտի ըլլար՝ թէ որ յանկարծ յիմար գտնուէի ու կառք նստէի՝ Գրիբսի դիմաց, ապուշի մը դերը կատարելով. ինքը լեզուն պիտի խածէր անշուշտ խնտալը բռնելու համար: Ա՛հ, չեմ գիտեր ինչպիսի՛ պաղարիւն մէկն ըլլալու է մարդ՝ որ կարենայ այդպիսի նախատինքի մը դիմանալ:

Պրշմ. — Թալ, կը բաւէ. մի՛ գայրացներ զիս: Թալ. — Ըրածս իրաւացի հատուցում մ'է. նախ դուն զիս գայրացուցիր:

Պրշմ. — Բարեկամներուս տկարութեանց համբերել գիտեմ . . . բայց թէ որ չափը անցընեն . . .

Թալ. — Դուն արդէն իսկ իմ համբերութեանս չափն անցուցիր:

Պրշմ. — Բայց գիտէս որ հանդարտ բնաւորութիւնս վերջին աստիճան գրգռութեան կը հասցընես:

Թալ. — Դու մինչեւ հիմայ իմ ցոյց տուած հանդարտութենէս զեղծար. դիմանալու բան չէ. գոհացումնս կ'ուզեմ:

Պրշմ. — Կատակ կ'ընես, ինչ կ'ընես:

Թալ. — Ո՛հ, ո՛հ, կատակ չէ, կ'երդնում:

Պրշմ. — Եւ սակայն խօսք տուեր էինք՝ որ կռիւ պիտի չընէինք:

Թալ. — Ամբարնոցը ձեռք ձգելու համար՝ այո՛. բայց այս բոլորովին ուրիշ բան է:

Պրշմ. — Հասկցայ, հասկցայ, ծայրը հոս կը բերես՝ վասն զի տեսար թէ զիս փոսը չկրցար ձգել:

Թալ. — Ո՛հ, պարոն Պրում, մտքիս մէջ եղածը ինչ աղէկ կը հասկընաս եղբր. կարծեմ հիմակուան մտածածս ալ գիտես:

Պրշմ. — Ա՛յո աղուոր. կը մտածես թէ ինչ որ ճարտարութեամբ չկրցայ ձեռք բերել՝ նայիմ կրնամ բռնութեամբ ստանալ:



Թալ. — Յուրովին հակառակը. կը մտածեմ որ պաշտօնակիցս մենամարտէն կը փախչի՝ որովհետեւ կը վախէ:

Պրում. — Այդ ըսածդ մինչեւ հիմայ մարդ մը համարձակած չէր ըսելու:

Թալ. — Կը զարմանամ, որովհետեւ ըսածս զուտ ճշմարտութիւն մ'է:

Պրում (տաշրը քաշելով). — Ա՛լ դիմանալ չեմ կրնար. եթէ այդ տեսակ խենթութիւններ պիտի սկսիս՝ ես ալ պէտք է յարմարիմ:

Թալ. — Ո՛հ, ո՛հ, վերջապէս զինուորական աշխոյժդ վրադ եկաւ:

Պրում. — Շատ լաւ, քանի որ կը տեսնես թէ տաքցայ, դուն ալ սուրդ քաշելու մի՛ դանդաղիր:

Թալ. — Բայց իմ սուրս քու երկոսյրիկդ համապատասխան զէնք մը չէ:

Պրում. — Հէ՛, հէ՛, հիմայ սկսար պատճառանքներ փնտռել, հա՛:

Թալ. — Ես ատրճանակով միայն կը մենամարտիմ:

Պրում. — Չէս յիշեր որ իմիններս երէկ զինագործին զրկեցիր:

Թալ. — Եթէ կ'ուզես՝ իմիններէս մէկը կրնաս գործածել. (երկու հատ դուրս կը հանէ):

Պրում (տաշրը տեղը դնելով). — Ինչո՞ւ չէ. գոհ եմ, կ'ընդունիմ:

Թալ. — Չիս արդէն պատրաստ է. երկուքնէս ո՛վ որ ընկերը գետին փռելու քաշութիւնն ու նենայ՝ թող հեծնէ ու փախչի:

Պրում. — Ճիշդն ըսելով՝ քեզի հետ կուռի ելլելըս խենդութիւն մ'է, բայց քանի որ դուն կ'ուզես...

Թալ (ատրճանակները ներկայացնելով). — Ուզածդ ընտրէ:

Պրում (մտաւ մը առնելով). — Ինծի համար մի և նոյնն են:

Թալ. — Ութը քայլաչափ միայն իրարմէ հետու կենանք:

Պրում. — Ի՛նչպէս որ կ'ուզես:

Թալ (տաշրը քաշալափ որոշելի վերջ). — Հո՞ս կ'ուզես կենալ թէ հո՞դ:

Պրում. — Անտարբեր եմ. (կ'անցնի կը կանգնի մէկ կողմը):

Թալ. — Ուրեմն պարպէ:

Պրում. — Նախ դուն պէտք է պարպես, քանի որ ինքզինքդ նախատուած կը համարիս:

Թալ. — Շատ աղէկ. (ատրճանակը կը պարպի):

Պրում. — Ծուռ նետեցիր:

Թալ. — Այնպէս կը տեսնուի:

Պրում. — Հիմայ կարգը իմս է:

Թալ. — Գիտեմ:

Պրում. — Ես իմս օդին մէջ կը պարպեմ:

Թալ. — Աղէկ, բայց նորէն պէտք է լեցնենք:

Պրում. — Ա՛յդչափ ուրեմն կուրցե՞ր ես:

Թալ. — Արիւն կ'ուզեմ տեսնել:

Պրում. — Լաւ ուրեմն, տես. (ատրճանակը կը պարպի):

Թալ. — Ահ... (զետիկ կ'իջնայ, երեսիկ վրայ կը դառնայ և կուրծքը ձեռքով կը ծածկի):

Պրում (քովը վազելով). — Ա՛հ, եղ՞ուկ ինձ...:

Թալ. — Ճիշդ սրտիս մէջտեղէն... ա՛յ, ա՛յ...:

Պրում. — Ի՛նչ յիմարաբար տեղիք տուի մենամարտելու:

Թալ. — Ա՛խ... վա՛յ... ո՛ւհ... կը մեռնիմ...:

Պրում. — Ա՛խ, ներէ ինծի, սիրելի ընկերակից:

Թալ. — Յանցանքը բոլոր իմս է:

Պրում. — Ա՛յո՛, Աստուած վկայ, մենամարտութեան ո՛րչափ հակառակ եմ:

Թալ. — Ես քեզի կը ներեմ... մանաւանդ թէ

ձիս ալ քեզի կ'ընծայեմ. անդին ծառին կապուած է... ա՛յ... ա՛յ...  
 Պրոշ. — Ո՛րչափ թշուառ եմ... խեղճը կը մեռնի. խելքս կը թոցընեմ... ո՛հ, ըրածս չեմ գիտեր... (վազելով կը փախչի):

### ՎԵՐՋԻՆ ՏԵՍԻԼ

Պարունը, Գուշիեղև և Թալ

Պարուն. — Ի՞նչ բան ունին մեր տան քով այս ատրճանակի հարուածները...

Գուշիեղև. — Ի՞նչ գիտնամ. կը վախեմ ձախորդութիւն մը հանդիպած ըլլայ...

Պրոշ. — Ի՞նչ կ'ըսես. չըլլայ թէ...

Գուշիեղև. — Ա՛հ, եղբայր իմ. ահա գետինը պառկած է Թալ սպասարը:

Պարուն. — Մեռած:

Թալ (կես մը վեր եղելով և խնուարով). — Բուրովի՞ն մեռած:

Գուշիեղև. — Ի՞նչ հանդիպեցաւ:

Թալ. — Լճու, լճու, հանգիստ եղէք, ես շատ աղէկ եմ, լաւ, ամենալաւ:

Գուշիեղև. — Բայց ի՞նչպէս վախցուցիր զմեզ:

Թալ. — Վերջէն թողութիւն պիտի խնդրեմ. բայց նախ ինձի այս ըսէք. սա կողմէն Պրոշ սալարը չի՞ տեսնուիր. (կողմը կը ցուցնէ):

Գուշիեղև. — Այո, հոն. ձին քառասուքակ կը վազընէ, յուսահատ մարդու մը պէս...

Թալ (կ'երի). — Յաղթութիւն ուրեմն, յաղթութիւն:

Պարուն. — Բայց ի՞նչ բան է, բացատրէ:

Թալ. — Հա, հա, հա... Պրոշ կը կարծէ թէ զիս սպաննեց:

Պարուն. — Մենամարտի մէջ:

Թալ. — Այո, բայց կեղծ մենամարտի մը. պատուայ խնդիր մը գրգռեցի. գիտէի որ իր ատրճանակները քովը չէին. իմիններս ներկայացուցի՛ առաջուց վառողով միայն լեցուցած. ձեւացուցի թէ իրմէն սպանուեցայ, և հետեւաբար ինքն ալ կը փախչի. հիմայ՝ անշուշտ սահմանը անցած կ'ըլլայ. ես փառաւորապէս մրցանակը ձեռք ձգեցի:

Գուշիեղև. — Կեցցես, վարպետ ես եղեր:

Թալ. — Հիմայ, տէր մարքիզ, ձեզի կ'իյնայ խոստովանքնիդ կատարել:

Գուշիեղև. — Պարտական եմ և յօժարութեամբ կը կատարեմ. քո՛վդ է այս ամարանոցս:

Թալ. — Շնորհակալ եմ, շատ շնորհակալ, սիրելի քեզիս. բայց կ'ուզէի հասկըցնել ձեզի թէ այնչափ ամարանոցը ձեռք ձգելու փափաքը չէր զիս մողղը որ այսպէս ընեմ, որքան այն խորամանկը խաբէլու հաճոյքը:

Պարուն. — Բայց հիմայ գէթ ետեւէն մարդը շրկելու և խեղճը ետ կանչելու է:

Թալ. — Այո, այո, ես ինքս կ'երթամ, կը համոզեմ որ ողջ եմ, և իր խորամանկութեան իբրև վարձ մը՝ ամարանոցը վայելու պիտի հրաւիրեմ, որուն տէր եղայ իրեն օգնութեամբ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0318350

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432390

8178